2010, ՀՈԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 19 (327)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*6 հոկտեմբերի*

### Հայաստանում իր լիազորություններն ավարտած՝ Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Սերժ Սմեսովին



Նորին Սրբությունը, շնորհակալություն հայտնելով դեսպանին Հայաստանում չորսամյա գործունեության համար, իր բարեմաղթանքները հղեց նրան՝ հայցելով Աստծո օրհնությունն ու օգնականությունը: Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ ձեւավորված բարեկամությունը կշարունակվի, ինչին իրենց կարեւոր նպաստն են բերում նաեւ դեսպանները:

Իր հերթին պարոն Սմեսովը նշեց, որ անմոռանալի տպավորություններով է հեռանում Հայաստանից:

### Թուրքմենստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Աթա Սերդարովին

Ամենայն Հայոց Հայրապետը շնորհավորեց դեսպանին նշանակման առիթով եւ հաջողություններ մաղթեց նրա առաքելությանը: Նորին Սրբությունը նաեւ գոհունակություն հայտնեց դեսպանատան կողմից Հայ Առաքելական եկեղեցու հանդեպ մշտապես ցուցաբերվող հարգանքի եւ ուշադրության համար:

Հանդիպման անդրադարձ կատարվեց նաեւ Թուրքմենստանի հայ համայնքին, հայ եւ թուրքմեն ժողովուրդների պատմական կապերին: Իր հերթին պրն Սերդարովը հավաստիացրեց Նորին Սրբությանը, որ իր պաշտոնավարման շրջանում կանի ամենը՝ երկու ժողովուրդների հարաբերությունների սերտացման ու զորացման համար:



*8 հոկտեմբերի*

### Ապակենտրոնացված համագործակցության հայ-ֆրանսիական համաժողովի մասնակիցներին

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց հայ-ֆրանսիական կապերի շարունակական զարգացման համար, որի շարժիչը երկու ժողովուրդների բարեկամության ոգին է:

Հայոց Հայրապետը նաեւ երախտագիտություն հայտնեց Ֆրանսիայի ժողովրդին եւ իշխանություններին՝ հայ ժողովրդին ցուցաբերած զորակցության համար, մասնավորապես՝ Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործում, ինչը կարեւոր է թե՛ հայ ժողովրդի նկատմամբ արդարության հաստատման եւ թե՛ հետագայում նման ոտնձգությունների կանխարգելման համար:

Հանդիպման անդրադարձ կատարվեց նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերին:

*11 հոկտեմբերի*

### Դեր Զորի նահանգապետ Հուսեյն Առնաուտին



Նորին Սրբությունը, ողջունելով նահանգապետի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, վերհիշեց 2001 թ. իր այցը Դեր Զոր: Անդրադառնալով հայ եւ արաբ ժողովուրդների բարեկամությանը՝ Վեհափառ Հայրապետը շնորհակալական զգացումով նշեց Սիրիայի ժողովրդի ու իշխանությունների հոգատար վերաբերմունքը հայ ժողովրդի հանդեպ: Նորին Սրբությունը երախտագիտությամբ ընդգծեց նաեւ, որ 1915 թ. Մեծ եղեռնի տարիներին ցեղասպանությունից մազապուրծ շատ հայորդիներ իրենց ապաստանն են գտել արաբ ժողովրդի մոտ:

Նորին Սրբությունն իր ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց նաեւ Սիրիայի Նախագահ Բաշար Ալ Ասադին:

*12 հոկտեմբերի*

### Սլովենիայի Հանրապետության նախագահին

Ողջունելով Սլովենիայի նախագահ Դանիլո Թյուրկի այցը հայոց հոգեւոր կենտրոն՝ Վեհափառ Հայրապետը ներկայացրեց եկեղեցու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում, անդրադարձավ պատմական դժվարին շրջաններին եւ հոգեւոր կյանքի ներկայիս զարթոնքին: Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը նաեւ գոհունակություն հայտնեց Հայաստանի եւ Սլովենիայի միջեւ հարաբերությունների հաստատման առիթով: Իսկ պրն Թյուրկը ներկայացրեց այցի իր տպավորությունները՝ նշելով, որ Սլովենիայի ժողովուրդը տեղյակ է հայ ժողովրդի բազմադարյան պատմությանը եւ քրիստոնեական հարուստ մշակույթին:

Սլովենիայի նախագահը խոսեց խաղաղ աշխարհի կառուցման գործում հոգեւոր առաջնորդների կարեւոր դերակատարության մասին: Այս առնչությամբ Նորին Սրբությունը նշեց Հայ Եկեղեցու՝ այլ կրոնների հետ խաղաղ գոյակցության պատմական փորձառությունը, ինչպես նաեւ ներգրավվածությունը միջկրոնական երկխոսության մեջ:



### Երեւանի պետական համալսարանի ուսանողներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ս. Թարգմանչաց տոնի առիթով կազմակերպված թարգմանության մրցույթին մասնակցած՝ Երեւանի պետական համալսարանի հիսուն ուսանողի:

ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպս Ժամկոչյանը եւ ԵՊՀ պրոռեկտոր Ռուբեն Մարկոսյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեցին նախաձեռնության մասնակիցներին:

Նորին Սրբությունը, ողջունելով նման ձեռնարկները, իր գնահատանքն ու օրհնությունը բերեց մրցույթի կազմակերպիչներին: *«Շատ կարեւոր է այսպիսի միջոցառումների կազմակերպումը, որովհետեւ դրանց միջոցով վերադառնում եք մեր հայրերի ավանդույթներին, հաղորդակից դառնում նրանց ստեղծած արժեքներին»,*- նշեց Վեհափառ Հայրապետը՝ շնորհավորելով մրցույթի հաղթողներին ու մաղթելով, որ լինեն արժանավոր եւ պիտանի հայորդիներ մեր ազգի ու հայրենիքի համար:

Նորին Սրբությունը պատասխանեց նաեւ ուսանողների բազմաթիվ հարցերին:

*Տե՛ս էջ 2*

## Մայր Աթոռի դիվանապետն ընդունեց ԱՊՀ վերահսկիչ մարմինների ղեկավարներին



Սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս Խաչատրյանն ընդունեց Հայաստանում անցկացվող ԱՊՀ բարձրագույն վերահսկիչ մարմինների ղեկավարների 10-րդ նիստի մասնակիցներին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից ողջունելով հյուրերի այցը ամենայն հայոց հոգեւոր կենտրոն՝ Արշակ սրբազանն անդրադարձավ ԱՊՀ երկրների միջեւ տարբեր մակարդակներում սերտացող համագործակցության կարեւորությանը եւ նիստի ընթացքում քննարկված հարցերի շրջագծին:

Հանդիպման ընթացքում վերահսկիչ մարմինների ղեկավարներին ներկայացվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հիմնադրման պատմությունը եւ կարեւոր առաքելությունը աշխարհասփյուռ հայ ժողովրդի կյանքում:

Հյուրերն այցելեցին նաեւ Մայր Աթոռի թանգարանները, ծանոթացան հոգեւոր մշակույթի ցուցանմուշներին:

## Նշանակումներ Հայ եկեղեցու թեմերում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ծառայող երեք եկեղեցական իր հոգեւոր ծառայությունը կշարունակի Հայ եկեղեցու տարբեր թեմերում:

Տ. Վարդ քհն. Գյոզալյանը եւ Տ. Առաքել քհն. Վարդազարյանը նշանակվել են ԱՄՆ հայոց Արեւելյան թեմում, իսկ Սերոբ սրկ. Հովհաննիսյանը՝ Գերմանիայի հայոց թեմում՝ թեմակալ առաջնորդների իշխանության ներքո:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Գարեգին աբղ. Համբարձումյանը մեկնել է Մեծ Բրիտանիա, ուր իր աստվածաբանական ուսումը կշարունակի Մրփիլդի «Հարության քոլեջում» (Շեֆիլդի համալսարան):

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վրդովմունքով տեղեկացանք, որ Թուրքիայի իշխանությունների արտոնությամբ հոկտեմբերի 1-ին «Ազգայնական շարժում» կուսակցության կողմից նամազ է կազմակերպվել Անիի հայոց Սուրբ Աստվածածին մայր տաճարում:

Սույն քայլը քաղաքական սադրանք է եւ որեւէ առնչություն չունի հոգեւոր-բարեպաշտական զգացումների եւ կրոնական ազատության ու իրավունքների հետ: Միաժամանակ դա փորձ է ժխտելու հայկական պատկանելությունը Անիի մայր տաճարի, որ աղոթագրկվել է հայոց ցեղասպանության հետեւանքով: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դատապարտում է այսօրինակ գործողությունները, որոնք սերմանում են անհանդուրժողություն եւ հայատյացություն:

Բացարձակապես անընդունելի է նաեւ քրիստոնեական սրբավայրի տրամադրումը նամազի համար՝ այն դեպքում, երբ հետեւողականորեն արգելվում է քրիստոնեական ժառանգության իրավատերերին պաշտամունք մատուցել իրենց իսկ տաճարներում: Այսպիսով, թուրքական իշխանությունները շարունակում են իրենց քայլերը՝ ուղղված հայկական հիշատակների ոչնչացմանը եւ հայոց պատմական սրբավայրերի ու մշակութային արժեքների յուրացմանը:

Ակնհայտ է նաեւ, որ սույն քայլով Թուրքիան վերստին ի դերեւ է հանում Հայաստանի եւ միջազգային հանրության ջանքերը՝ ի նպաստ հայ-թուրքական երկխոսության հաստատման եւ հարաբերությունների կարգավորման:

## Մայր Աթոռ Սբ Էջմիածնի մասնակցությունը Սերբիայի եւ Համայն Սլովենիայի Պատրիարքի գահակալությանը

Հոկտեմբերի 3-ին Կոսովոյի Պեչսկի վանքում տեղի ունեցավ Սերբիայի եւ Համայն Սլովենիայի Պատրիարք Նորին Սրբություն Իրենեոսի գահակալության արարողությունը: Սերբ Ուղղափառ եկեղեցում ձեւավորված ավանդության համաձայն՝ Պատրիարքի գահակալության արարողությանը մասնակցում են տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Նորին Սրբություն Իրենեոսի գահակալության արարողությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էին Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արք. Բեկչյանը եւ Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը:

## Էկումենիկ ժողովներ

Սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 1-ը Ժնեւում, Միացյալ ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհրդի 15-րդ նստաշրջանի հետ համատեղ, կայացավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Միջազգային հարաբերությունների հարցերով հանձնախմբի հանդիպումը՝ նվիրված Միացյալ ազգերի պաշտպանության շաբաթին:

Հանդիպումը նվիրված էր իսրայելա-պաղեստինյան հակամարտությանը եւ Նիգերիայում տիրող իրավիճակին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին միջազգային հանրության աջակցության հնարավորությունները՝ տիրող իրավիճակը շտկելու եւ տարածաշրջանում խաղաղություն հաստատելու ուղղությամբ:

Էկումենիկ եւս մեկ ժողով տեղի ունեցավ հոկտեմբերի 2-8-ը Տիրանայում (Ալբանիա): Ժողովի ընթացքում քննարկվեցին միջազգային մարտահրավերների ազդեցությունները եկեղեցիների վրա, ինչպես նաեւ մշակվեցին ծրագրեր էկումենիկ համագործակցության եւ փոխօգնության նոր ռազմավարություն ձեւավորելու համար:

Ժողովներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացրեց եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի աշխատակից Ծովինար Ղազարյանը:

## Ժողով Վատիկանում

Հոկտեմբերի 11-ին Վատիկանում Հռոմի Բենեդիկտոս ԺԶ Պապի նախագահությամբ տեղի ունեցավ Մերձավոր Արեւելքի Կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոսաց ժողովը՝ «Կաթոլիկ Եկեղեցին Մերձավոր Արեւելքում. հաղորդակցություն եւ վկայություն» նշանաբանով:

Ժողովին մասնակցում էին 185 կարդինալ, պատրիարք եւ եպիսկոպոս, որոնք ներկայացնում էին Մերձաւոր Արեւելքի 17 երկրներ:

Ժողովին հրավիրված էին նաեւ Մերձավոր Արեւելքի Ուղղափառ եւ Արեւելյան եկեղեցիների ներկայացուցիչներ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցում էր Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս Նալբանդյանը:



# ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 7-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր աշխատանքներն սկսեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Հոլանդիայի հայոց հոգեւոր հովվության կողմից Հայկական տպագրության հիմնադրման 500-ամյա հոբելյանի առիթով կազմակերպված եռօրյա գիտաժողովը: Այն նվիրված էր Ամստերդամի «Սբ Էջմիածին եւ Սբ Սարգիս Զորավար» հայկական տպարանի հիմնադրմանը (1660 թ.) եւ գործունեությանը:



Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի արխիվի տնօրեն Տ. Ասողիկ քհն. Կարապետյանը:

Գիտաժողովի առաջին նիստը նախագահում էին Տ. Տաթեւ վրդ. Հակոբյանը եւ Ռենե Բեքյուն, որի ընթացքում լսվեցին Տ. Ներսես ավգ քհն. Ներսիսյանի՝ «Ինչպես տոնել հայկական տպագրության 500-ամյա հոբելյանը. Թովմաս եւ Ղուկաս Վանանդեցիների ավանդը», Ազատ Բոզոյանի՝ «Ամստերդամյան տպագրության առաջին փուլը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը», Էլիզ Թաջիրյանի՝ «Սբ Էջմիածին եւ Սբ Սարգիս Զորավար» տպարանը. տիպաբանական վերլուծություն», Տիգրան Զարգարյանի՝ «Հայ հնատիպ գրքի պահպանությունը թվայնացման օգնությամբ՝ Ամստերդամի հրատարակությունների օրինակով», Գրիգոր Բրուտյանի՝ «Տոմարական գրականությունն Ամստերդամի տպագրություններում» զեկույցները:

Երկրորդ նիստում՝ նախագահությամբ Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանի եւ Ազատ Բոզոյանի, լսվեցին հետեւյալ զեկույցները. Դավիթ Ղազարյան՝ «Ոսկանյան» տպարանը եւ հայերեն հնատիպ հմայիլները», Վարդան Դեւրիկյան՝ «Գանձերի եւ չափածո մյուս ստեղծագործությունների ամստերդամյան հրատարակությունները», Տ. Տաթեւ վրդ. Հակոբյան՝ «Մաշտոց»-ի՝ Ոսկան Երեւանցու հրատարակությունը»:

Գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց հոկտեմբերի 8-ին եւ 9-ին:

Հաջորդ օրվա առաջին նիստը, որը նախագահում էին Հ. Լեւոն Պողոս Չեքիջյանը եւ Տ. Ասողիկ քհն. Կարապետյանը, սկսվեց Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանի զեկույցով՝ «Վանանդեցի հրատարակիչների նպաստը հայ տպագրությանը»: Այնուհետեւ լսվեցին Ռենե Բեքյուի (Հոլանդիա) «Ամստերդամի տարալեզու հրատարակությունները 1620-1720 թթ. հայկական եւ հրեական հրատարակությունների համեմատական», Մանյա (Էռնա) Շիրինյանի՝ «Յաղագս առաքինութեանց» երկի հայերեն թարգմանության առաջին՝ ամստերդամյան հրատարակությունը», Արմեն Տեր-Ստեփանյանի՝ «Առաքել Դավրիժեցու նորահայտ փիլիսոփայական երկը» եւ Գայանե Պողոսյանի՝ «Ամստերդամի հայկական տպարանի բնագիտական հրատարակությունները» թեմաներով զեկույցները:

Երկրորդ նիստը նախագահում էին Տ. Ներսես ավգ քհն. Ներսիսյանը եւ Գրիգոր Բրուտյանը:



Ներկայացվեցին հետեւյալ զեկույցները. Հ. Լեւոն Չեքիջյան՝ «Տպագրության արվեստը որպես գործոն եւ միջոց Հայոց վաղաժամ հարաբերակցության ու կենսունակ շփման Արեւմտյան Եվրոպայի արդիականացման շրջափուլին հետ», Արփենիկ Ղազարոսյան՝ «Հայ ձեռագրային ավանդների շարունակությունն ամստերդամյան հրատարակություններում», Ռուբեն Գալչյան՝ «Ամստերդամի «Աշխարհացոյց» քարտեզը», Նորայր Պողոսյան՝ «Հայերեն հնատիպ գրքի հիշատակարանների լեզուն», Տ. Տաթեւ վրդ. Հակոբյան՝ «Ամստերդամի հայկական տպագրության դերը ժամանակի հոգեւոր-մշակութային կյանքում»:

Հոկտեմբերի 9-ին գիտաժողովի շրջանակներում Մաշտոցի անվան Մատենադարանում բացվեց Ամստերդամում տպագրված հայ հնատիպ գրքերի եւ այնտեղ գրված հայերեն ձեռագրերի ցուցահանդես՝ «Սուրբ Էջմիածնի լույսն Ամստերդամի հայոց տպարանից» խորագրով:

Նույն օրը գիտաժողովի մասնակիցները մեկնեցին Ուշիի Սբ Սարգիս եկեղեցի, որտեղ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ հայ տպագրիչների հոգիների հանգստության համար: Իսկ երեկոյան Կամերային երաժշտության տանը, մասնակցությամբ Հայաստանի կամերային նվագախմբի, տեղի ունեցավ դասական երաժշտության համերգ:

Գիտաժողովին մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, ինչպես նաեւ Հայաստանի եւ արտերկրի տարբեր գիտակրթական հաստատությունների 18 գիտնական:

*Լրատվական նյութերը՝*
*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

## Մայր Աթոռի դիվանապետն ընդունեց ԱՊՀ վերահսկիչ մարմինների ղեկավարներին



Սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս Խաչատրյանն ընդունեց Հայաստանում անցկացվող ԱՊՀ բարձրագույն վերահսկիչ մարմինների ղեկավարների 10-րդ նիստի մասնակիցներին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից ողջունելով հյուրերի այցը ամենայն հայոց հոգեւոր կենտրոն՝ Արշակ սրբազանն անդրադարձավ ԱՊՀ երկրների միջեւ տարբեր մակարդակներում սերտացող համագործակցության կարեւորությանը եւ նիստի ընթացքում քննարկված հարցերի շրջագծին:

Հանդիպման ընթացքում վերահսկիչ մարմինների ղեկավարներին ներկայացվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հիմնադրման պատմությունը եւ կարեւոր առաքելությունը աշխարհասփյուռ հայ ժողովրդի կյանքում:

Հյուրերն այցելեցին նաեւ Մայր Աթոռի թանգարանները, ծանոթացան հոգեւոր մշակույթի ցուցանմուշներին:

## Նշանակումներ Հայ եկեղեցու թեմերում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ծառայող երեք եկեղեցական իր հոգեւոր ծառայությունը կշարունակի Հայ եկեղեցու տարբեր թեմերում:

Տ. Վարդ քհն. Գյոզալյանը եւ Տ. Առաքել քհն. Վարդազարյանը նշանակվել են ԱՄՆ հայոց Արեւելյան թեմում, իսկ Սերոբ սրկ. Հովհաննիսյանը՝ Գերմանիայի հայոց թեմում՝ թեմակալ առաջնորդների իշխանության ներքո:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Գարեգին աբղ. Համբարձումյանը մեկնել է Մեծ Բրիտանիա, ուր իր աստվածաբանական ուսումը կշարունակի Մրֆիլդի «Հարության քոլեջում» (Շեֆիլդի համալսարան):

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վրդովմունքով տեղեկացանք, որ Թուրքիայի իշխանությունների արտոնությամբ հոկտեմբերի 1-ին «Ազգայնական շարժում» կուսակցության կողմից նամազ է կազմակերպվել Անիի հայոց Սուրբ Աստվածածին մայր տաճարում:

Սույն քայլը քաղաքական սադրանք է եւ որեւէ առնչություն չունի հոգեւոր-բարեպաշտական զգացումների եւ կրոնական ազատության ու իրավունքների հետ: Միաժամանակ դա փորձ է ժխտելու հայկական պատկանելությունը Անիի մայր տաճարի, որ աղոթագրկվել է հայոց ցեղասպանության հետեւանքով: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դատապարտում է այսօրինակ գործողությունները, որոնք սերմանում են անհանդուրժողություն եւ հայատյացություն:

Բացարձակապես անընդունելի է նաեւ քրիստոնեական սրբավայրի տրամադրումը նամազի համար՝ այն դեպքում, երբ հետեւողականորեն արգելվում է քրիստոնեական ժառանգության իրավատերերին պաշտամունք մատուցել իրենց իսկ տաճարներում: Այսպիսով, թուրքական իշխանությունները շարունակում են իրենց քայլերը՝ ուղղված հայկական հիշատակների ոչնչացմանը եւ հայոց պատմական սրբավայրերի ու մշակութային արժեքների յուրացմանը:

Ակնհայտ է նաեւ, որ սույն քայլով Թուրքիան վերստին ի դերեւ է հանում Հայաստանի եւ միջազգային հանրության ջանքերը՝ ի նպաստ հայ-թուրքական երկխոսության հաստատման եւ հարաբերությունների կարգավորման:

## Մայր Աթոռ Սբ Էջմիածնի մասնակցությունը Սերբիայի եւ Համայն Սլովենիայի Պատրիարքի գահակալությանը

Հոկտեմբերի 3-ին Կոսովոյի Պեչսկի վանքում տեղի ունեցավ Սերբիայի եւ Համայն Սլովենիայի Պատրիարք Նորին Սրբություն Իրենեոսի գահակալության արարողությունը: Սերբ Ուղղափառ Եկեղեցում ձեւավորված ավանդության համաձայն՝ Պատրիարքի գահակալության արարողությանը մասնակցում են տարբեր Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Նորին Սրբություն Իրենեոսի գահակալության արարողությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էին Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արք. Բեկչյանը եւ Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը:

## Էկումենիկ ժողովներ

Սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 1-ը Ժնեւում, Միացյալ ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհրդի 15-րդ նստաշրջանի հետ համատեղ, կայացավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Միջազգային հարաբերությունների հարցերով հանձնախմբի հանդիպումը՝ նվիրված Միացյալ ազգերի պաշտպանության շաբաթին:

Հանդիպումը նվիրված էր իսրայելա-պաղեստինյան հակամարտությանը եւ Նիգերիայում տիրող իրավիճակին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին միջազգային հանրության աջակցության հնարավորությունները՝ տիրող իրավիճակը շտկելու եւ տարածաշրջանում խաղաղություն հաստատելու ուղղությամբ:

Էկումենիկ եւս մեկ ժողով տեղի ունեցավ հոկտեմբերի 2-8-ը Տիրանայում (Ալբանիա): Ժողովի ընթացքում քննարկվեցին միջազգային մարտահրավերների ազդեցությունները եկեղեցիների վրա, ինչպես նաեւ մշակվեցին ծրագրեր էկումենիկ համագործակցության եւ փոխօգնության նոր ռազմավարություն ձեւավորելու համար:

Ժողովներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացրեց եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի աշխատակից Ծովինար Ղազարյանը:

## Ժողով Վատիկանում

Հոկտեմբերի 11-ին Վատիկանում Հռոմի Բենեդիկտոս ԺԶ Պապի նախագահությամբ տեղի ունեցավ Մերձավոր Արեւելքի Կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոսաց ժողովը՝ «Կաթոլիկ եկեղեցին Մերձավոր Արեւելքում. հաղորդակցություն եւ վկայություն» նշանաբանով:

Ժողովին մասնակցում էին 185 կարդինալ, պատրիարք եւ եպիսկոպոս, որոնք ներկայացնում էին Մերձավոր Արեւելքի 17 երկրներ:

Ժողովին հրավիրված էին նաեւ Մերձավոր Արեւելքի Ուղղափառ եւ Արեւելյան եկեղեցիների ներկայացուցիչներ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցում էր Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս Նալբանդյանը:



## ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 7-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր աշխատանքներն սկսեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Հոլանդիայի հայոց հոգեւոր հովվության կողմից Հայկական տպագրության հիմնադրման 500-ամյա հոբելյանի առիթով կազմակերպված եռօրյա գիտաժողովը: Այն նվիրված էր Ամստերդամի «Սբ Էջմիածին եւ Սբ Սարգիս Զորավար» հայկական տպարանի հիմնադրմանը (1660 թ.) եւ գործունեությանը:





Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի արխիվի տնօրեն Տ. Ասողիկ քհն. Կարապետյանը:

Գիտաժողովի առաջին նիստը նախագահում էին Տ. Տաթեւ վրդ. Հակոբյանը եւ Ռենե Բեքյուս, որի ընթացքում լսվեցին Տ. Ներսես ավգ քհն. Ներսիսյանի՝ «Ինչպես տոնել հայկական տպագրության 500-ամյա հոբելյանը. Թովմաս եւ Ղուկաս Վանանդեցիների ավանդը», Ազատ Բոզոյանի՝ «Ամստերդամյան տպագրության առաջին փուլը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը», Էլիզ Թաջիրյանի՝ «Սբ Էջմիածին եւ Սբ Սարգիս Զորավար» տպարանը. տիպաբանական վերլուծություն», Տիգրան Զարգարյանի՝ «Հայ հնատիպ գրքի պահպանությունը թվայնացման օգնությամբ՝ Ամստերդամի հրատարակությունների օրինակով», Գրիգոր Բրուտյանի՝ «Տոմարական գրականությունն Ամստերդամի տպագրություններում» զեկույցները:

Երկրորդ նիստում՝ նախագահությամբ Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանի եւ Ազատ Բոզոյանի, լսվեցին հետեւյալ զեկույցները. Դավիթ Ղազարյան՝ «Ոսկանյան» տպարանը եւ հայերեն հնատիպ հմայիլները», Վարդան Դեւրիկյան՝ «Գանձերի եւ չափածո մյուս ստեղծագործությունների ամստերդամյան հրատարակությունները», Տ. Տաթեւ վրդ. Հակոբյան՝ «Մաշտոց»-ի՝ Ոսկան Երեւանցու հրատարակությունը»:

Գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց հոկտեմբերի 8-ին եւ 9-ին:

Հաջորդ օրվա առաջին նիստը, որը նախագահում էին Հ. Լեւոն Պողոս Չեքիյանը եւ Տ. Ասողիկ քհն. Կարապետյանը, սկսվեց Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանի զեկույցով՝ «Վանանդեցի հրատարակիչների նպաստը հայ տպագրությանը»: Այնուհետեւ լսվեցին Ռենե Բեքյուի (Հոլանդիա) «Ամստերդամի տարալեզու հրատարակությունները 1620-1720 թթ. հայկական եւ հրեական հրատարակությունների համեմատական», Մանյա (Էռնա) Շիրինյանի՝ «Յաղագս առաքինութեանց» երկի հայերեն թարգմանության առաջին՝ ամստերդամյան հրատարակությունը», Արմեն Տեր-Ստեփանյանի՝ «Առաքել Դավրիժեցու նորահայտ փիլիսոփայական երկը» եւ Գայանե Պողոսյանի՝ «Ամստերդամի հայկական տպարանի բնագիտական հրատարակությունները» թեմաներով զեկույցները:

Երկրորդ նիստը նախագահում էին Տ. Ներսես ավգ քհն. Ներսիսյանը եւ Գրիգոր Բրուտյանը: Ներկայացվեցին հետեւյալ զեկույցները. Հ. Լեւոն Չեքիյան՝ «Տպագրության արվեստը որպես գործոն եւ մղիչ Հայոց վաղաժամ հարաբերակցության ու կենսունակ շփման Արեւմտյան Եվրոպայի արդիականացման շրջափուլին հետ», Արփենիկ Ղազարոսյան՝ «Հայ ձեռագրային ավանդների շարունակությունն ամստերդամյան հրատարակություններում», Ռուբեն Գալչյան՝ «Ամստերդամի «Աշխարհացոյց» քարտեզը», Նորայր Պողոսյան՝ «Հայերեն հնատիպ գրքի հիշատակարանների լեզուն», Տ. Տաթեւ վրդ. Հակոբյան՝ «Ամստերդամի հայկական տպագրության դերը ժամանակի հոգեւոր-մշակութային կյանքում»:

Հոկտեմբերի 9-ին գիտաժողովի շրջանակներում Մաշտոցի անվան Մատենադարանում բացվեց Ամստերդամում տպագրված հայ հնատիպ գրքերի եւ այնտեղ գրված հայերեն ձեռագրերի ցուցահանդես՝ «Սուրբ Էջմիածնի լույսն Ամստերդամի հայոց տպարանից» խորագրով:

Նույն օրը գիտաժողովի մասնակիցները մեկնեցին Ուշիի Սբ Սարգիս եկեղեցի, որտեղ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ հայ տպագրիչների հոգիների հանգստության համար: Իսկ երեկոյան Կամերային երաժշտության տանը, մասնակցությամբ Հայաստանի կամերային նվագախմբի, տեղի ունեցավ դասական երաժշտության համերգ:

Գիտաժողովին մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, ինչպես նաեւ Հայաստանի եւ արտերկրի տարբեր գիտակրթական հաստատությունների 18 գիտնական:

*Լրատվական նյութերը՝*
*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

# Ատոմ Յարճանյան (Սիամանթո)

Սկիզբը՝ թիվ 15-18

Բանաստեղծը հայ ժողովրդի այս ճակատագրական փորձությունը համարում է *«մոխիրներու եւ մահերու դանթեական ճանապարհ»* («Թեթնին»):

Շարքն ավարտվում է «Հաղթանակ մը» բանաստեղծությամբ: Մահվան դանտեական ճանապարհով քայլում է հայ գաղթականների եղեռնազարկ թափորը. *«Ա՜հ, ի՜նչ աղիողորմ ու ցավագին կարավան, // Մարմիններ կան, որ թեւ չունին... // Եվ իրաններ, առանց ծունկի, փորի վրա զարհուրանքով մը կը սողան... // Եվ ջախջախված ծնոտներով ծերունիներ «օգնությո՜ւն մեզ» կ'աղաղակեն...»*:

Սա վերջն է, բայց ժողովրդի կորովի ոգին անգամ այս իրադրությունների մեջ կոչ է անում դիմադրության: Բավակա՜ն է խեղճությունը, թեեւ՝ *«Ինչ որ տեսանք այս օրերուս, դարերն իսկ չեն տեսած»*: «Վշտերով սպառազեն» պիտի ոտքի կանգնեն հայ երիտասարդները. *«Կրակեցե՛ք, կրակեցե՛ք, հեռուներեն Յույսը մեզի կը նայի... // Ես իմ սրտես զարնվեցա... իմ մարմինս ձեզի պատնեշ... // Յաղթանակը մեզի է, կրակեցե՛ք, Աստեղաբիբ Եղբայրներ...»*:

Ինչպես Դանտեն «Դժոխքի» մուտքում մոլորվում է մութ անտառի մեջ, եւ թվում է, թե այլեւս չկա փրկության ճար, բայց հանկարծ անտառի խորքում լույս է երեւում, այդպես էլ Յարճանյանը հայոց բախտի մութ ու անթափանց գիշերվա մեջ տեսնում է Յույսը, որը զինված ինքնապաշտպանությունն է եւ Ոգու ամրությունը:

**«Հայրենի հրավեր: Տասներկու կոչ տարագիր հայության», 1910:** Շարքը ներշնչված է հայրենիքի փրկության հույսով: Այս դեպքում նրա հույսը որոշակի է՝ կոչ հայրենիքից հեռացած հայորդիներին՝ վերադառնալու հայրենի եզերք, այն շենացնելու՝ որպես մի նոր կյանքի սկիզբ:

Յոգեվարքի մեջ գտնվող հայրը դիմում է ընտանիքի անդամներին. *«Վերջին նամակն ինծի տվեք, որ արցունքներս սրբեմ...»*: Եվ ապա վերջում. *«Եթե դիակս ալ ըլլա, պետք է որդիս այս իրիկուն աչքերս բա՜ց տեսնեմ»*: Չառանցանքի մեջ գտնվող ծերունու միակ հույսը որդու վերադարձն է («Հայրը հոգեվարք»): Նույն կերպ՝ կինն է կարոտով երազում ամուսնու վերադարձը. կին, որն անգամ դեռ չի հասցրել մայրանալ («Հարսին երազը»): Ասես կրկնվում է Գ. Զոհրապի «Այրին» նորավեպի դիպաշարը:

Գրում է եղբայրը եղբորը, հայտնում. *«Մեր մայրը մեռավ այս իրիկուն»*՝ աչքը քո ճանապարհին: Իսկ ինքը մորը հուղարկավորելուց հետո պիտի մեկուսանա իրենց թափուր տնակի մեջ՝ *«Երկու դռներն իբր դագաղ»* ինքն իր վրա փակելով:

Հաջորդում են «Մոր մը երազը», «Մայրը իր զավակին», «Որդին իր հորը», «Հայ դաշտերուն պաղատանքը» եւ մի քանի այլ գործեր: Որդին մեծացել է առանց հորը տեսնելու: Շատ ծանր ու հանդիսավոր է հնչում հայոց դաշտերի խոսքը. *«Արարատյան աշխարհներեն մինչ հովիտներն Եփրատյան // Մեր ընդերքներեն բարձրացող պաղատանքն ու պարսավը ձե՛զ կ'ուղղենք, // Կյանքին հանդեպ դրուժանննե՛ր, հեռացողնե՛ր կամ երկչոտնե՛ր. // Յալածական կամ աքսորյալ, դո՛ւն վտարանդի կամ տարագիր, // Ո՞ւր եք եւ ո՛ւր են ձեր բազուկները, որ մեր կողերը կ'արորեին...»*:

Վերադարձը, համախմբումը հայրենիքի փրկության երաշխիք են: Յայրենիքում պիտի ապրես, որպեսզի հայրենիքը ժառանգի պես չորքանա կամ ծնողի պես չանտերանա, որպեսզի այն դառնա քո՛ հայրենիքը եւ ոչ թե ուրիշի.

*Ամեն բարիք եւ մարդկային չարիքներու*
*ամեն դարման,*
*Մեր խորհուրդեն, մեր խավարեն, մեր*
*օրենքեն պետք է հուսալ...*
*Ու այսպես՝ Զիթենիին ոստերուն հետ*
*աստվածաբույս,*
*Սուրն ալ մեզմե կը ծնան, սրբությունն*
*ալ Յորյանին...*

Յարճանյանն ունի նաեւ բազմաթիվ բանաստեղծություններ, որոնք կա՛մ ի մի չեն բերվել շարքերի մեջ, կա՛մ մնացել են անտիպ: Դրանցից առանձնացնենք «Չարչարանքի տեսիլները» (1911), որն արձագանքում է «Մահվան տեսիլքին» եւ «Նավասարդյան աղոթք առ դիցուհին Անահիտ»-ը (1914), որը տպագրվել է Դ. Վարուժանի խմբագրած «Նավասարդ» տարեգրքում եւ ձայնակցում է վերջինիս գլխավորած հեթանոսական շարժման գաղափարներին:



**«Սուրբ Մեսրոպ», 1913:** 1913 թ. հոկտեմբերին հայ ժողովուրդը նշում է հայոց գրերի ստեղծման 1500 եւ հայոց տպագրության սկզբնավորման 400-ամյակները: Այդ կապակցությամբ գրվեցին բազմաթիվ բանաստեղծություններ եւ պոեմներ: Դրանցից է Յարճանյանի «Սուրբ Մեսրոպ» պոեմը, որը գրվեց 1912-ին, լույս տեսավ 1913-ին Թիֆլիսում: Բնույթով այն քնարական է: Բաղկացած է չորս մասից՝ «Ներբողական», «Սուրբին աղոթքը», «Տեսիլքը», «Գյուտին փառքը»: Բանաստեղծը փառաբանում, մեծարում եւ գնահատում է հայոց գրերն ստեղծող Մեսրոպ Մաշտոցին՝ ամբողջ գործը հեղեղելով բազմաթիվ տպավորիչ բնութագրություններով:

«Ներբողականը» նախերգանքի բնույթ ունի, որի մեջ բանաստեղծը ներկայացնում-բնութագրում է Մաշտոցին.

*Օշականի անհո՛ւն մեռյալ,*
*Դուն բյուրավոր ճյուղերով*
*Ոսկեհոս գետ գիտության,*
*Մտքի Փրկիչ, հույսի Յսկա, կյանքի Կեդրոն,*
*Դուն անվախճա՛ն փոշիացյալ,*
*Դուն ջահերուն անմարելի շտեմարան,*
*Ուրկեց ուղեղս, մանկությանս օրերուն,*
*Ես՝ աղքատորեն եկա վառել...*

Այս անընդհատ թվարկում-բնութագրությունների մեջ կերպավորվում է Մաշտոցը՝ որպես ազգային գոյության բարձրագույն եւ եզակի խորհրդանշան:

Ըստ ավանդության, որ մեզ են հասցրել մեր մատենագիրները՝ Կորյունը, Խորենացին, Փարպեցին, հայոց գրերի պատկերը Մաշտոցին տրվել է տեսիլքի մեջ: Նա ջերմեռանդ աղոթք է անում: Ահա «Սուրբին աղոթքը» գլխում Մաշտոցը մտովի խոսում է Աստծու հետ. *«Լույս տուր ինծի, Աստվա՜ծ անհերքելի..., // Օգնե՛ ինծի, մեծապարգե՛ւ իմաստություն...»*: Այսպես նա դիմում է *«Տարրերու հայր»* Աստծուն, *«անծի՛ր աստծուն»*, *«անբաղդատ Օրենք»* Աստծուն եւ հայցում օգնություն: Այս ընթացքում իր մեծ նախորդի՝ Գրիգոր Նարեկացու նման նա մի կողմից մեծարում է Աստծուն, մյուս կողմից՝ ստորադասում իրեն: Նա իրեն համարում է անվավեր վարդապետ, անարժան օրհնաբան, *«սահմանափակ պատուհան եւ փակյալ դուռ»*: Այնուհետեւ.

*Օգնե ինձ համագումար Սկզբունք,*
*Մկրտության ես անմյուռոն ավազան,*
*Ես աղոթքի կիսակործան գավիթ,*
*Ես արորազուրկ հողագործ,*
*անգերանդի հնձող,*
*Ես անբույր ծաղիկ եւ դառնահամ յուղ*
*...Ես մենության մեջ մխացող*
*անկարավան անապատ,*
*Այցելությո՜ւն տուր ինծի...*
*...Աստվա՜ծ անհեղլի, Աստվա՜ծ*
*անափունք,*
*Արարչագործ ձեռքդ իմ ուղեղիս երկարե,*
*Յոն իմ գյուտս խմորելու...*

Տրվում է տեսիլքը. Աստծու հրեշտակներից մի քերովբե Մաշտոցի *«Մենաստանին որմի վրա // Յայկազնյան Այբբենարանը տառագրեց»*: Յրաշքը կատարվում է, որին եւ հաջորդում է գյուտի փառաբանությունը: Յիմա արդեն հեղինակն է փառաբանում Մաշտոցին ճիշտ այնպես, ինչպես «Սուրբ աղոթքի» մեջ Մաշտոցը՝ Աստծուն: Մաշտոցը դառնում է սուրբ, եւ արժանի խոսքերն այսպես են ուղղվում նրան. *«Մեսրո՛պ, հայ դարերուն դիմացը կեցող // Դուն ադամանդյա ապառաժ... // ...Դուն աննինջ հսկող, դուն տիտանյան Տեսանող... // ...Դուն բարբառի արարիչ, Բանի իշխան... // ...Դուն անվատնելի ցորյանի դաշտ, դուն ծրի՜ հաց, // Դուն հունձք հարուստ... // ...Դուն մեծաթափանց նայվածքներով առաքյալ... // ...Դուն երկրո՛րդ Աստված, // Եվ մտածման Դուն առաջին արարիչ...»*:

Աստծու առջեւ Մաշտոցն էր, Մաշտոցի առջեւ նրա գործը շարունակող բանաստեղծն է, որը, իրեն համարելով *«ապաժաման քնարահար // Եվ անվճար ու անարժան երախտագետ»*, խոսքն ավարտում է այսպես.

*Եվ թույլ տուր այսօր, ո՜վ Մեսրոպ*
*Որ Յայոց հողեն մինչեւ աստղերը հասնող*
*Քու ոսկե սանդուխեդ վե՛ր բարձրանամ*
*Եվ հաստատաքայլ, աստիճանե աստիճան*
*Ու պսակե ի պսակ եւ լույսե ի լույս,*
*Իբրեւ զավակ մը մտածումիդ,*
*Ես ի քե՛զ գամ, իմ այս երգս երգելու...*

Շարունակությունը՝ էջ 6

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՓԻԼԻՊՈՍ Ա ԱՂԲԱԿԵՑԻ

## (1632-1655)

Սկիզբը՝ էջ 3

Յովհաննես Արղնեցին, հասնելով Լվով, սկսում է հաշտության եւ սիրո քարոզներ խոսել: Դրան ժողովուրդն ընդդիմանում է եւ չի ուզում ենթարկվել Նիկոլին: Վերադառնում է Նիկոլը՝ կաթողիկոսի օրհնության կոնդակով եւ Յայոց Եկեղեցուն ենթարկվելու հանձնառությամբ: Դա հանգստացրեց ժողովրդին, որը մտածում էր, թե Նիկոլը զղջացել է: Պետական իշխանությունները, որ սկզբում ընդունել էին հայերի կրոնական ազատությունը, չեն ընդդիմանում, երբ եպիսկոպոսը եւ ժողովուրդը կամենում են հաշտվել:

Եվ ժողովուրդը, որ 23 տարի առաջ հանվել էր եկեղեցուց, կրկին մտնում է եկեղեցի: Յովհաննես Արղնեցու գործունեությունից գոհ Կազիմիր թագավորը, գալով Լվով, շնորհակալություն է հայտնում նրան՝ եպիսկոպոսին ու ժողովրդին հաշտեցնելու համար: Դրանից հետո որոշեցին նշել հաշտությունը՝ որպես միության տոն: Առաջին անգամ դա արվեց 1652 թվի օգոստոսի 8-ին: Այդ տոնի համար օր սահմանվեց Յոգեգալուստից հետո տասնմեկերորդ կիրակին: Այդ օրն էլ կայացավ հաշտությունը: Սա եւս ցույց է տալիս Փիլիպոսի ջատագովությունը հայադավանության հարցում: Յայերի հաշտությունը մեծ վիշտ պատճառեց Լատին Եկեղեցուն:

Յովհաննես Արղնեցին մի ամբողջ տարի մնաց Լվովում, որպեսզի կարգավորի բոլոր խնդիրները, կանոնների եւ ծեսերի գործադրումը: Նա Էջմիածին վերադարձավ 1654 թվին եւ կաթողիկոսին հայտնեց իր առաքելության հաջողության մասին:

Փիլիպոսի բացակայության շրջանում նշանավոր եղավ Ս. Գայանեի եւ Ս. Յռիփսիմեի վկայարանների նորոգությունը: Ս. Գայանեի վկայարանի վերանորոգությանը ձեռնամուխ էր եղել Փիլիպոսը՝ դեռ 1651-ին: Նորոգությունն սկսում են կատարել հիմքից մինչեւ գմբեթ: Յետո ձեռնամուխ են լինում նաեւ Ս. Յռիփսիմեի վկայարանի վերանորոգությանը:

Ս. Գայանեի վերանորոգության ժամանակ՝ 1652-ին, գործի կարգադրիչ Յովհաննես աբեղան կամենում է վկայարանի ներքեւում գտնել վկայուհիների գերեզմանները եւ մյուսներին ճանապարհելով՝ միայնակ ձեռնամուխ է լինում պեղումներին: Մի գիշեր եւ ցերեկ աշխատելուց հետո նա բախտ է ունենում գտնել երեք վկայուհիների գերեզ-



մանները: Նա միայն մի ոսկոր է վերցնում եւ այնուհետեւ փակում է տապանները՝ ամրացնելով կրով եւ խճով, ինչպես առաջ էին: Յետո այդ մասին հայտնում է միաբաններին եւ ցույց տալիս ոսկորը: Դա կատարվում է 1652 թվի հոկտեմբերի 19-ին: Այս ամենի միակ վկան աբեղան է, սակայն այն կասկածներ չի շարժում:

Թերեւս նույն Յովհաննես աբեղան նման պրպտումներ իրականացնում է նաեւ Ս. Յռիփսիմեի եկեղեցում: Սակայն դա արվում է միաբանների մասնակցությամբ: Յայտնաբերվում են 45 տարի առաջ նորից տեղը դրված նշխարները:

Վկայարանների նորոգումն ավարտվում է 1653 թվին՝ տեւելով երեք տարի: Փիլիպոսի սկսած գործը հաջողությամբ ավարտել է Յակոբ Ջուղայեցին:

Իր երկարատեւ ճանապարհորդությունից հետո Էջմիածին վերադարձավ Փիլիպոս կաթողիկոսը: Նա Մայր Աթոռի դատարկված գանձատան համար եկեղեցական երեւելի անոթներ եւ սպասներ հավաքեց, կաթողիկոսությունը ճոխացրեց «մարմնավոր կարասներով»: Նա գումարներ բերեց՝ Մայր Աթոռի ժամատունը կառուցելու համար, որոնք ամբողջությամբ հոգաց Անտոն Ջելեբի անունով մի հարուստ պրուսացի վաճառական, որը վաճառատներ ուներ նաեւ Կ. Պոլսում եւ Զմյուռնիայում:

Շարունակելի

**Բաբկեն ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**ՅՅ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր**

# ՌՈՒՍԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՏՈՒՆԸ



Դարեր ի վեր մեր հայրերը կառուցել են մեծ ու փոքր բազում եկեղեցիներ, սակայն մեր եկեղեցաշինության մեջ ոչ մի աղոթատուն իր կոթողայնությամբ այնպես աչքի չի ընկել, ինչպես Մոսկվայի առաջնորդանիստ եկեղեցին: Մեծաշուք եկեղեցական համալիրն ընդգրկում է Մայր տաճարը, Ս. Խաչ եկեղեցին, առաջնորդարանի շենքը, կրթմշակութային, վարչական եւ հյուրանոցային մասնաշենքերը: Այն մեր սուրբ նախնիների փառավոր ավանդույթներով կառուցվող ներդաշնակ մի համալիր է: 50 մետր բարձրությամբ աղոթատունն ասես բռունցք լինի՝ երկինք մխրճված: Տաճարի 21 մետր տրամագծով գմբեթն առայժմ ամենախոշորն է մեր եկեղեցաշինության մեջ: Քառախորան գմբեթի վրա քանդակված է 72 խաչ՝ Քրիստոսի աշակերտների թվով:



Եկեղեցական համալիրը կառուցվում է բաց ծիրանագույն, իսկ Մայր տաճարը՝ վարդագույն տուֆով՝ բերված մերօրյա Անի քաղաքից:

Համալիրի Ս. Խաչ եկեղեցին վաղուց արդեն պատրաստ է աղոթասեր հավատացյալներին դիմավորելու համար: Դեռ մեկ տարի առաջ՝ 2009 թվականի նոյեմբերին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին 2-րդի ձեռամբ կատարվեց եկեղեցու խաչի օծման արարողությունը: *«Մեր զավակները կհամախմբվեն եկեղեցու ներքո եւ առավել նախանձախնդրորեն կլծվեն իրենց ազգային կյանքի շինության գործին»*,- ասաց Վեհափառ Հայրապետը հավաքված հարյուրավոր հայորդիներին ու հյուրերին:

Եկեղեցու աջ կողմում գրանիտե խաչքարի վրա փորագրված է Տերունական աղոթքը, իսկ ձախակողմում՝ հայոց այբուբենը՝ որպես մեր ժողովրդի դարավոր գոյության երաշխիքներ:

Ս. Խաչ եկեղեցու ներքնահարկում հանդիսությունների դահլիճ կա, որտեղ կարող է տեղավորվել ավելի քան երեք հարյուր հիսուն մարդ:



Ներքին հարդարման մասնակի աշխատանքներն այստեղ դեռ շարունակվում են: Արդեն պատրաստ են սբ Սեղանի մարմարի գողտրիկ զարդանախշերը, որոնց հերթագայելու են որմնանկարներն ու սրբապատկերները:

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի հսկողությամբ ընթացող շինարարական աշխատանքները մերթընդմերթ ընդհատվում են միայն քար չունենալու պատճառով: «Անիի քարհանքի տնօրինության անբարեխիղճ աշխատանքի արդյունքում քարը տեղ է հասնում ուշացումով, ինչի պատճառով աշխատանքը երբեմն կանգ է առնում»,- ցավով ասում է Եզրաս սրբազանը: Վերջին ուշացումը եղավ օգոստոսին, եւ միայն ՀՀ նախագահի աշխատակազմի միջամտության արդյունքում վեց վագոն տուֆը հնարավոր եղավ բերել: Քարի հետ կապված դժվարությունները, սակայն, սրանով չեն ավարտվում: Ըստ պայմանավորվածության՝ հանքից քարերը պետք է տրամադրվեին արդեն կտրտված, սակայն, խախտելով պայմանավորվածությունը՝ դրանք Մոսկվա են ուղարկվում ամբողջական կտորներով: «Ամեն մի քարը կշռում է հինգից մինչեւ ութ տոննա: Դրանք հատելու եւ մշակելու համար լրացուցիչ ծախս ու ժամանակ է պահանջվում, ինչը հավելյալ հոգս է մեզ համար»,- լրացնում է սրբազանը:

Մինչ ձմռան խստաշունչ ցրտերը կսկսվեն՝ խնդիր է դրված ավարտել արտաքին քարային աշխատանքները: «Նախանշված ժամկետներից մի փոքր հետ ենք ընկնում, սակայն լիահույս ենք, որ Աստծո ողորմած կամքով կառուցվող եկեղեցական համալիրը ժամանակին ավարտին կհասցնենք»,- այնուամենայնիվ հուսադրում է սրբազան հայրը:

Մեր եկեղեցաշինության ավանդույթներով կառուցվող տաճարն ունի մի քանի առանձնահատկություն, որոնք ընդգծում են Մոսկվայի Մայր եկեղեցու յուրօրինակությունը: Տաճարը գրեթե ամբողջությամբ գոտեւորում են խաչապատկերները, իսկ համաքրիստոնեական ու ազգային սրբերի պատկերաքանդակները շնչավորում ու պատկերավորում են պատերի՝ ընդանուր առմամբ խուլ մակերեսները: Տաճարի մուտքի ձախ կողմում Ասատուր Քոչարյանը քանդակում է մեր եկեղեցու գլխավոր սրբություններից մեկը՝ սբ Գեղարդը: Մուտքի աջ կողմում լինելու է հայրապետական Աթոռի զորությունը խորհրդանշող սբ Գրիգոր Լուսավորչի Աջը, իսկ վերնամասում՝ Փրկչի պատկերաքանդակը:

«Այդ ամենը ներդաշնակորեն կապված են եկեղեցու ծավալների հետ: 16 խաչքարային հորինվածք արդեն քանդակված է: Մեր ճարտարապետության մեջ առաջին անգամ խաչքարը ոչ թե ագուցվում է պատի մեջ, այլ ի սկզբանե նախագծվում է որպես շենքի օրգանական մաս: Իսկ թե որտեղ է վերջանում պատը, որտեղ՝ հարթաքանդակ-խաչքարը, այդ սահմանը չկա»,- ասում համալիրի ճարտարապետ Արտակ Ղուլյանը:

Զարդանախշերի ու հարթաքանդակների ծավալուն աշխատանքերն իրականացնելու համար պրոֆեսիոնալ քանդակագործների կարիք կա: Գործը, թերեւս, առաջ է գնում Հայաստանից



բերված «3D» թվածրագրային հաստոցների օգնությամբ, որոնք նորույթ են քանդակագործության մեջ: Եթե վարպետը 1քմ քանդակում է 1 ամսում, ապա թվածրագրային հաստոցները նույն աշխատանքն անում են մոտ 10 ժամում:

Ծավալային աշխատանքների ավարտական փուլը կարծես ուրվագծվում է: Եկեղեցու գլխավոր կամարակապ մուտքը շուտով պատրաստ կլինի: «Տաշիր» կազմակերպության նախաձեռնությամբ ու բարերարությամբ գրեթե ավարտվում են ներքին ինժեներական աշխատանքները, ինչը հնարավորություն կտա ձմռանն ունենալ ջուր, էլեկտրականություն եւ ջերմապահովության անխափան աշխատանք:

«Մխիթարված ենք ու բավարարված, որ եկեղեցին կառուցվում է Աստծո ողորմած կամքով, մեր ժողովրդի բարեպաշտ զավակների հավատքով ու սիրով, նրանց նվիրատվությամբ ու բարերարությամբ: Այս հոգեւոր, ազգային նվիրական կառույցը բոլորիս հոգու, սրտի, պարտքի ու պատվի գործն է»,- ասում է Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանը:

Եկեղացական համալիրը կառուցվում է բացառապես զոհաբերություններով: Պետական կառավարման մարմինները որեւէ ֆինանսական աջակցություն չեն ցուցաբերում, սակայն, ինչպես նշում է Եզրաս սրբազանը, պետական կառույցների բարոյական աջակցությունն ու բարեհաճ վերաբերմունքն իրենք զգում են եւ ընկալում որպես ներդրում:

Համալիր այցելող յուրաքանչյուր ոք անպայման կնկատի, թե ինչպես է օր օրի բարեզարդվում ու ամբողջական տեսք ստանում մեծաշուք համալիրը: «Շնորհիվ բարերարների ու նվիրատուների՝ արվում է կարելին, որպեսզի արժանապատվորեն ու հայավայել ավարտենք այս սուրբ գործը»,- ասում է Եզրաս սրբազանը:

Եկեղեցին միայն քարեղեն կառույց չէ: Նրա ամեն մի քարը յուրաքանչյուր հայի հավատքն է: Որքան ամուր լինի այդ հավատքը, այնքան կենսունակ ու զորեղ կլինի ոչ միայն քարեղեն եկեղեցին, այլեւ Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին:

*Ալվարդ ՆԱԶԱՐՅԱՆ*

# ՏՈՆ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

«Զանց անելով իմաստությունը՝ նրանք ոչ միայն վնաս կրեցին բարին չճանաչելու համար, այլ աշխարհում անմտության հիշատակ թողեցին»

*(Իմաստ. Ժ 8)*

Այս տարի Սրբոց Թարգմանչաց (Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Կլայեցու) տոնը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնեց հոկտեմբերի 9-ին: Քրիստոնեության պատմության մեջ կենդանի են ոչ միայն այն անձինք, որոնց անունները հիշատակված են Տոնացույցում եւ արտաբերվում են իբրեւ սրբեր, այլեւ նրանք, ովքեր հավատում են իրենց կոչմանը եւ ունեն նվիրում:

Թարգմանչաց տոնը սբ Սահակի, սբ Մեսրոպի ու թարգմանիչ սբ վարդապետների կողմից ուխտի հրավեր է՝ ուղղված բոլորիս՝ պահպանելու հայկականությունը մեր սրտերում:

387 թ. Հայաստանի թագավորությունը երկփեղկվելով բաժանվեց Պարսկաստանի եւ Բյուզանդիայի միջեւ: Բյուզանդական Հայաստանում, որի մեջ մտնում էին միայն Բարձր Հայքի սահմանները, շուտով վերանում է Հայոց թագավորությունը, եւ հիշյալ տարածքներն սկսում է կառավարվել Բյուզանդայի կողմից նշանակված կոմսի միջոցով, իսկ Արեւելյան Հայաստանում Արշակունիների թագավորությունը թեպետեւ գտնվում էր Պարսկաստանի իշխանության տակ, այդուհանդերձ գոյատեւում է շուրջ երեք տասնամյակ:

Ճիշտ այս դժվարին պայմաններում է, որ սկիզբ է առնում հայ մշակույթի Ոսկեդարը: Ասպուրակես կաթողիկոսի (381-386) մահից հետո Հայոց կաթողիկոսական Աթոռը վերադարձվում է Լուսավորչի տոհմին. կաթողիկոս է ընտրվում Մեծն Ներսեսի որդի սբ Սահակը (387-439):

Թերթելով Հայոց պատմության էջերը՝ հասկանում ենք, թե ինչ փորձությունների եւ դժվարությունների միջով է անցել հայ ժողովուրդը, սակայն շնորհիվ Տիրոջ բարերար Աջի՝ եղել են անձինք, որոնք կտրուկ փոխել են պատմության ընթացքը՝ ի շահ մեր ազգի: Վերոհիշյալ շրջանում հենց այդպիսի այրերից էր սբ Մեսրոպ Մաշտոցը:

5-րդ դարի սկզբին (405-406) ստեղծված հայոց գիրը ոչ միայն մեր ժողովրդի գոյատեւման առհավատչյան էր, այլեւ նրա ոգեկոչումի եւ իբրեւ ժողովուրդ՝ ինքնահաստատման անջնջելի վկայագիրը: Թեեւ 301 թ. հայ ժողովուրդն ընդունել էր քրիստոնեությունը, սակայն այն ամբողջապես մերը դարձնելու համար հարկավոր էր հայեցի հնչեղությունը: Հենց այս սուրբ գործի իրականացմանը լծվեցին սբ Մեսրոպ Մաշտոցն ու սբ Սահակ Հայրապետը, որոնց աշակերտեցին նաեւ մի խումբ հայորդիներ եւ զարկ տվեցին ինչպես թարգմանչական, այնպես էլ ինքնուրույն եւ մեկնողական գրականությանը:

Բարեսեր Վռամշապուհ թագավորը (389-417), որ թեեւ ազգությամբ հայ չէր, սակայն իր օգնությունն էր բերում հայ գրի գյուտի հաջողությանը, դպրոցների բացմանը, որովհետեւ հավատում էր հավիտենական գանձի գոյությանը: Երջանկահիշատակ Գեւորգ Զ Չորեքչյան (1945-1954) Կաթողիկոսը Վարդանանց տոնի 1500-ամյակին նվիրված իր կոնդակում հստակորեն բնորոշում է սուրբ թարգմանչաց դերը. «Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի ստեղծած սքանչելագործ Հայ գիրը եւ նրանց դաստիարակած Թարգմանչաց սերնդի մեծագործությունը հայ գրականության համար հանդիսացան այն մեծ անոթը, որ բարոյապես վերածնեց Հայ ժողովրդին եւ իմաստավորեց նրա հանրային կյանքը»:

Այո՛, ճշմարիտ են Հայրապետի խոսքերը. դարեր են անցել գրերի գյուտից, Ավետարանի թարգմանությունից, սակայն նրանք չեն մոռացվում եւ մեռած չեն համարվում մեզ համար, այլ հիշվում եւ ապրում են մեր սրտերում, որովհետեւ ապրել են հավատով, գործել անմահության եւ անմահացնելու տեսիլքով ու գաղափարով:

Թե՛ Մեսրոպ Մաշտոցը, թե՛ Սահակ Հայրապետը եւ թե՛ նրանց աշակերտներն իրենց հավատքով եւ տքնաջան աշխատանքով, գիշերը ցերեկին խառնելով՝ իրենց ազգի համար կարողացան բացել կյանքի, անմահության, իմաստության եւ ճշմարիտ ճանապարհի տանող ուղին:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՕԳՏԱՃԱՐ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ




Դեռեւս Տիգրան Մեծի օրոք Հայաստանը որոշակի առնչություն ուներ Պաղեստինի հետ, թեեւ հայերի մուտքը Երուսաղեմ հիշատակվում է քրիստոնեության տարածման առաջին շրջանում՝ 4-րդ դարից սկսած: Այստեղ հաստատված հայերը հիմնականում հոգեւորականներ էին, իսկ հետագայում՝ 7-րդ դարում, երբ ձեւավորվեց Երուսաղեմի հայոց պատրիարքությունը, առաջացավ եւ հայ աշխարհիկ համայնքը:

Րաֆֆու վկայությամբ՝ մեր թագավորներից, իշխաններից, հարուստներից շատերը, երբ երկրում չէին կարողանում բարբարոսների հորդաներին դիմագրավել, իրենց գանձերն առնելով, ապաստանում էին այստեղ: Այդ ճանապարհին առաջին ուխտավորը քրիստոնյա Աբգարի կինը՝ Հեղինե թագուհին էր, որին հետեւելու էին շատերը: Երուսաղեմը մեզ համար դարձավ նույնը, ինչ Մեքքան՝ մահմեդականների համար: Միանգամայն հասկանալի է Րաֆֆու վերաբերմունքն այս հարցի նկատմամբ. նրան առավելապես հետաքրքրել է երեւույթի տնտեսական կողմը, ինչը խիստ անհրաժեշտ էր ժողովրդի ներունակ ուժը պահպանելու առումով: Այսօր խնդիրը նախ եւ առաջ բարոյական, հոգեւոր, մշակութային նշանակություն ունի: Քաղաքակրթության ակունքներում մեր ներկայությունը հարկ է ոչ այնքան փաստել, որքան պահպանել: Հայերն այստեղ բավականաչափ շատ եկեղեցիներ են ունեցել: Թերեւս աղբյուրներից արժանահավատը 7-րդ դարի հայ հոգեւորական Անաստաս Վարդապետի «Վասն վանորէից Հայոց, որ յԵրուսաղէմ» գրվածքն է: Նա վկայում է, որ հայերը Սուրբ երկրում ունեին 70 եկեղեցի: Դրանց մի մասը կրում էր հայոց նախարարական տների անունները՝ «Արծրունեաց վանք», «Ռշտունեաց վանք», «Կամսարականաց վանք», «Մամիկոնեից վանք յանուն Ս. Կարապետի», «Կարնեցւոց վանք», որ շինել է Սմբատ Բագրատունին եւ այլն:

Հետագայում մեր եկեղեցիների թիվը նվազեց: Այսօր այլ ազգերին պատկանող եկեղեցիների, սրբավայրերի պատերին պահպանվել են հայերեն արձանագրություններ, որ վկայում են, թե դրանք մի ժամանակ պատկանել են հայերին: 21-րդ դարում այդ սրբավայրերը համաշխարհային քաղաքակրթության բացառիկ նմուշներ են, որ իրենց մեջ բովանդակում են մարդկության պատմության ամենակարեւոր ժամանակահատվածներից մեկը՝ քրիստոնեության ծննդից մինչեւ մեր օրերը:

Այսօր խստորեն կարեւորվում է ճանաչման խնդիրը: Բանն այն է, որ բավականաչափ շատ գրականություն է տպագրվում Սբ Երուսաղեմի մասին, որտեղ չիմացության կամ միտումնավորության հետեւանքով աղավաղվում են հայկական սրբատեղիների, ազգային ավանդությունների մասին եղած տեղեկությունները, ինչն էլ թյուրիմացության մեջ է գցում հետաքրքրվողներին: Ստեղծված կացության մեջ խստորեն կարեւորվում է այնպիսի մի գրքի առկայությունը, որն ընթերցողի համար արժանահավատ աղբյուր կծառայի՝ երեւույթները ճիշտ հասկանալու, հետեւաբար եւ մոլորություններից զերծ մնալու առումով:

Այս ուղղությամբ շնորհակալ եւ հետաքրքիր աշխատանք են իրականացրել Սրբոց Հակոբյանց վանքի միաբան Էմանուել աբեղա Աթաջանյանը եւ բանասիրական գիտությունների թեկնածու Գեւորգ Մադոյանը: «Երուսաղեմի հայոց սրբավայրերը» եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) գիրքը Երուսաղեմի եւ նրա արվարձանների հայոց սրբավայրերի մի ուղեցույց է, որ տպագրվել է Մոսկվայում՝ 2010-ին (սա երկրորդ հրատարակությունն է): Հեղինակները հաջողությամբ են լուծել իրենց առջեւ դրված խնդիրը: Մատչելի լեզվով, հստակորեն ներկայացվում են սրբատեղիները: Տեղեկությունները կարճառոտ են, բովանդակալից ու հետաքրքիր: Գիրքը սովորական ուղեցույցներից տարբերվում է գիտական պատշաճ մակարդակով, արժանահավատ տեղեկություններով եւ որ կարեւոր է՝ համապատասխան լուսանկարներով, որոնք հեղինակների խոսքը դարձնում են առարկայական ու նաեւ ընկալելի: Ակնհայտ է, որ նրանք նկատի են ունեցել զանգվածային ընթերցողի ինչպես իմացության մակարդակը, այնպես էլ բազմազբաղությունը:

Ուղեցույցն ունի քարտեզ, որտեղ ներկայացվում են Հին Երուսաղեմը, Հայոց թաղը՝ իր սրբատեղիներով, փողոցներով, թանգարանով, գրադարանով, վարժարանով եւ այլն: Հեղինակներն այնպես են համադրել ուղեցույցի լուսանկարներն ու դրանց վերաբերյալ արված մեկնաբանությունները, որ դրանք դարձել են միմյանց հերթագայող պատմությունների շարք:

Բնականաբար հեղինակներն առավել մեծ ուշադրություն դարձրել են Հայոց թաղի վրա: Պարսպապատ Երուսաղեմի հարավային մասում է գտնվում Սրբոց Հակոբյանց վանքը, որի շրջակայքում սփռված թաղամասերում էլ բնակվում են հայերը: Հայոց թաղը հայտնի է իր Սբ Հակոբ մայր տաճարով, Սբ Փրկիչ եւ Սբ Հրեշտակապետաց վանքերով, Պատրիարքարանով, Ժառանգավորաց եւ Թարգմանչաց վարժարաններով, մոտ 4000 ձեռագիր ունեցող Սբ Թորոս ձեռագրատուն-եկեղեցիով, Գյուլպենկյան գրադարանով, թանգարանով, վարդապետների համար կառուցված Պարտիզաթաղով եւ այլն:

Սբ Հակոբը Երուսաղեմի հայ գլխավոր եկեղեցին է եւ քաղաքի երկու հին եկեղեցիներից մեկը. մյուսը հունաց Ս. Հովհաննեսն է: Սբ Հակոբը կառուցված է Հակոբոս Տյառնեղբոր տան վայրում: Վերջինս Երուսաղեմի պատրիարքական աթոռի հիմնադիրն է, եւ նրա ժառանգներն են համարվում հայ եւ հունական պատրիարքությունները: Սբ Հակոբի տաճարում կարեւոր տեղ ունի Սբ Գլխադիր մատուռը, որտեղ ըստ ավանդության ամփոփված է Հակոբ Զեբեդյանի գլուխը, որը դաստառակով բերում են Աստվածածնի, Հակոբ Տյառնեղբոր եւ Հովհաննես ավետարանչի առջեւ:

Տաճարում կարեւոր է Հակոբ Տյառնեղբոր աթոռը՝ գեղեցկազարդ գմբեթով: Այստեղ տարին մեկ անգամ բազմելու իրավունք ունի պատրիարքը, մեկ էլ՝ նորընտիր պատրիարքը՝ գահակալության առաջին օրը:

Հեղինակները բարեխղճությամբ ներկայացրել են դարերից մեզ հասած այն մասունքները, որոնք առավել իրական ու նաեւ բովանդակալից են դարձնում մեր կենսագրությունը: Այս առումով խիստ կարեւոր է Սբ Թորոս եկեղեցու հիշատակումը. այն կառուցվել է Հեթում Ա-ի կողմից՝ 1286 թվականին: Այստեղ պահվում են բացառիկ ձեռագրեր, որոնք անգնահատելի են համաշխարհային մշակույթի, մասնավորապես մեր պատմության համատեքստում: Այստեղ են պահպանվում 1296-ին Երզնկայում ընդօրինակված Ավետարանը, 1260-ին Հռոմկլայում Թորոս Ռոսլինի ձեռամբ ստեղծված Ավետարանը, արժեքավոր է 1192 թվականի Մաշկեւորի վանքի Ճաշոցը, Ակներո վանքի «Հաճախապատումը» (1215), Միքայել Ասորու «Ժամանակագրութիւնն» ու Գրիգոր Ակնեցու «Պատմութիւն թաթարացն» ամփոփող՝ 1273 թվականի ձեռագիրը եւ այլն:

*Շարունակությունը՝ էջ 7*

# ԱՏՈՄ ՅԱՐՃԱՆՅԱՆ (ՍԻԱՄԱՆԹՈ)

*Սկիզբը՝ էջ 4*

Ատոմ Յարճանյանը հայ պոեզիան նորոգեց ու թարմացրեց իր բոցավառ տաղանդով: Նրա հիրավի անսանձ երեւակայությունն ստեղծում է ծավալվող երկարաձիգ ու հուսանուտ պատկերներ: Նրա բանաստեղծական յուրաքանչյուր տող ինքնին գյուտ է: Տեղ ունեն ե՛ւ բանաստեղծի փոխաբերական մտածողությունը, ե՛ւ համեմատությունների ու մակդիրների անսովոր կիրառությունը, ե՛ւ բառապաշարի հարստությունը՝ լի նոր բառաձեւերով ու նորաբանություններով (*դժոխահայաց, մահակարոտ, չարախաբյալ, արյունաբիբ, արյունկզակ խուժան, սարսափը երկաթեցնել, «Արեգակն իր մահովը հորիզոններն եղեռնորեն է կը ներկեր», անլույծ խորհուրդ, աստղածորան գիշերներ, ահեղավազ Եփրատ, աշտարակվել, արշալույսվել, սրբավեմ, հորդահոսան, մեռելաստվեր*):

Ակնհայտ է, որ նրա ուսուցիչը հայոց բանաստեղծության անմրցելի մեծություն Գրիգոր Նարեկացին է:

Նարեկացուց նա յուրացրել է գեղարվեստական մտածողության այնպիսի ձեւեր, որպիսիք են պատկերների թվարկումը, հակադրությունները պատկերային շարքի մեջ, մակդիրների կուտակումը: Իսկ խոսքի ներքին մենախոսական բնույթը Յարճանյանի ստեղծագործության մեջ ընդունում է կոչի ու պատգամի բնույթ, դառնում երգ ու օրհնանք, ձայն ու շարժում: Թվարկումները, ինչպես Նարեկացու «Մատյան...»-ում, այնպես եւ այստեղ, ունեն խոսքը ներքուստ պարուրաձեւ զարգացնող բնույթ, պարույրները, որպես խոսքային կառույց, նման են իրար, բայց միշտ մի շարք առաջ են: Այստեղից էլ խոսքի ներքին շարժուն զարգացումը:

Ավելացնենք, որ Յարճանյանի տողերը լեցուն են խիտ ու զորավոր ուժով, ինչը պայմանավորված է ե՛ւ ներքին խորությամբ եւ ընդգրկման լայնությամբ: Դա համազգային եւ համամարդկային ընդգրկում ունեցող ծավալվող մտածողություն է, որ հնչում է ողբերգության ու սգերգի վեհացնող ձայներով:

Յարճանյանը դիմում է նաեւ պատկերների խորացման՝ ներգործությունն ավելի ազդեցիկ դարձնելու համար, ինչպես՝ *«Մեռելներ կան, որ պե՛տք է անգամ մը եւս մեռցնել...», «Մոխիրները պետք է դեռ անգամ մըն ալ մոխրացնել»*:

Շատ յուրահատուկ է նրա խոսքի կշռույթը:

Յարճանյանի օգտագործած բանաստեղծական ձեւը կամ այլ կերպ՝ տաղաչափական համակարգը ազատաչափն է (ազատ բանաստեղծություն, վերլիբր), որը տաղաչափական հինգ համակարգերից մեկն է: Ազատաչափի մեջ չկա ո՛չ վանկերի, ո՛չ շեշտերի հավասարություն: Բացակայում է նաեւ հանգը: Ազատաչափի մեջ տողերի միջեւ առաջանում է տողի արտասանական-հնչերանգային ավարտվածության տրամաբանական ամփոփվածության կշռույթ: Տողը պետքը արտասանել ոչ թե ներքին դադարներով կամ հատածներով, ինչպես վանկական եւ վանկաշեշտական բանաստեղծության մեջ է, այլ իմաստին համապատասխան հնչերանգով:

Պետք տարբերակել ազատ բանաստեղծությունը արձակ բանաստեղծությունից: Ազատ բանաստեղծությունը բանաստեղծություն է, իսկ արձակ բանաստեղծությունը՝ արձակ, որը, սակայն, ունի քնարական, խոհական ապրումներով լեցուն բանաստեղծական շունչ: Արձակ բանաստեղծություններ գրել են Մեծարենցը, Արազին, Տուրգենեւը,



Թագորը եւ ուրիշներ: Ազատաչափով գրել են մեր նախկին բանաստեղծները: Այդպես են ստեղծված Գողթան երգերը, այդպես են իրենց ապաշխարանքի երգերը հյուսել Սահակ Պարթեւը, Մեսրոպ Մաշտոցը, Մովսես Խորենացին: Այդպես են գրված Գրիգոր Նարեկացու տաղերն ու «Մատյան...»-ը: Ներսես Շնորհալուց սկսած՝ հայոց բանաստեղծությունն ընդունեց վանկական, հանգային բնույթ:

Այնպես որ Յարճանյանը եզակի է իր օգտագործած ազատաչափով, որի մեծագույն ներկայացուցիչներից մեկը 19-րդ դարի ամերիկյան բանաստեղծ Ուոլթ Ուիթմենն է՝ իր «Խոտի տերեւները» (1855) գրքով, այնուհետեւ՝ Էմիլ Վերհարնը:

Ազատաչափն այնքան բարդ համակարգ է, որին թեեւ փորձել են դիմել Դ. Վարուժանը, Ե. Չարենցը, Պ. Սեւակը, բայց այդ ձեւը նրանց ստեղծագործության մեջ չի ստացվել, որովհետեւ ունեին կշռույթի իրենց յուրահատուկ զգացողությունը:

Մի բան ակնհայտ է՝ Յարճանյանի ազատ, ներքուստ հարաճուն ու ճյուղավորվող պատկերային մտածողությունը չէր կարող տեղավորվել ներդաշնակ հանգ ու չափի մեջ: Եվ բնական է, որ նրա ծանր ու ընդլայնվող տարերքը գտել է դրսեւորման համապատասխան ձեւ:

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՐԱՀԵՏՆԵՐԻ ՃԱՄՓՈՐԴԸ

*«Երբ արվեստի գավաթը մինչեւ վերջ լցվում է հմտությամբ ու արհեստի փայլատակումով, անհրաժեշտ է թափել պարունակությունը եւ կրկին լցնել նախաստեղծով, անաղարտով ու անպաճույճով: Սրանում է արվեստի բարեշրջության փրկությունն ու հավիտենությունը»:*

Այս խոսքերը պատկանում են հայ կերպարվեստի չափազանց ինքնատիպ ներկայացուցիչներից մեկին՝ գեղանկարիչ Հովսեփ Կարալյանին, արվեստագետ, ում թողած ողջ ժառանգությունը հենց լավագույն ապացույցն ու հաստատումն է իր իսկ խոսքերի:

Ծնվել է 1897 թ. Թիֆլիսում, 1914-1916 թթ. սովորել Թիֆլիսի գեղեցիկ արվեստները խրախուսող կովկասյան նկարչական դպրոցում, 1917-



ից, երբ ընդամենը 20 տարեկան էր, սկսում է պարբերաբար մասնակցել թբիլիսյան գեղարվեստական ցուցահանդեսներին: 922-936 թթ. զբաղվում է մանկավարժական աշխատանքով, սկզբում՝ Թբիլիսիի հանրակրթական դպրոցներում, ապա՝ Մոսկվա տեղափոխվելուց հետո (1927 թ.), այստեղ գործող Հայաստանի մշակույթի տան գեղարվեստական ստուդիայում: Հայկական պետական դրամատիկական ստուդիայում ձեւավորում է Գ. Սունդուկյանի «Քանդած օջախ» պիեսը (ռեժ. Ռ. Սիմոնով): 1936 թ. մասնագիտական կրթությունը շարունակում է Մոսկվայի բարձրագույն գեղարվեստա-տեխնիկական ինստիտուտի գրաֆիկայի բաժնում: Ինստիտուտն ավարտելուց երկու տարի անց արդեն նկարիչների միության անդամ էր: 1947 թ. տեղափոխվում է Բաքու եւ Աշխաբադ՝ այստեղ տարհանված գեղարվեստի ուսումնարանում դասավանդում գծանկար ու գեղանկար: 1953 թ. նա վերջապես հաստատվում է մայր հայրենիքում՝ ակտիվորեն մասնակցելով Հայաստանի նկարիչների միության կազմակերպած բոլոր ցուցահանդեսներին եւ իր անուրանալի ներդրումը բերում Հայաստանի մշակութային կյանքի զարգացմանը: 1969 թ. էկրան բարձրացած Ս. Փարաջանովի «Նռան գույնը» կինոնկարի զգեստների էսքիզների հեղինակն է: Նա զբաղվել է նաեւ գրքի գրաֆիկայով եւ պլակատով: Հանրապետական, համամիութենական ու արտասահմանյան ցուցահանդեսներին մասնակցելուց զատ, ունեցել է նաեւ անհատական ցուցահանդեսներ Երեւանում, Մոսկվայում, Նովոսիբիրսկում: Մահացել 1981 թվականին:

Նրա ստեղծագործությունները պահպանվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, Մոսկվայի Տրետյակովյան պետական պատկերասրահում, Արեւելքի ժողովուրդների արվեստի պետական թանգարանում, Երեւանի ժամանակակից արվեստի թանգարանում, Թումանյանի տուն-թանգարանում եւ բազմաթիվ մասնավոր հավաքածուներում:

Կարալյան նկարիչն առավելապես հայտնի է որպես «հուշագրական» կոմպոզիցիաների նկարիչ, կոմպոզիցիաներ, որոնցում արդեն ապրված, անցած-գնացած օրերի,



պատկերների ու պահի զգացողությունները տարիների հեռվից վերաիմաստավորվում են, դառնում ապրեցնող կարոտի, խոհականության, յուրաքանչյուրիս մեջ անվերջ տրոփող մանկության, դարերից փոխանցված հնավանդ կենցաղի՝ նորովի գտնված մի աշխարհի, որում թագավորում են կարոտաբույր լույսն ու անսահման բարու խաղաղաշունչ արտացոլումները:

Թեեւ նկարչի ողջ կյանքն անցել է հիմնականում եվրոպական քաղաքային մշակույթի խառնարանում, սակայն հոգով ու էությամբ մնաց հավատարիմ իր մանկության տարիների արեւելակովկասյան հնավանդ կենսակերպի նախաստեղծ պոեզիային: Այդ պոեզիան կարմիր թելի պես անցնում է նրա բոլոր գործերով, միահյուսվում դարեսկզբյան թիֆլիսյան կոլորիտին, կինտոների, փողոցային մանրավաճառների, պարզ ու հասարակ մարդկանց դժվարին առօրյային, դրանց հանդեպ նկարչի ունեցած կարոտածին խոհ ու ապրումին:

Ասելիքը հիմնականում կենտրոնացնելով մարդկային ֆիգուրների, կենցաղային պարզ դրվագների վրա՝ նկարիչը հմտորեն ընդհանրացնում է պատկերվածն ու երեւույթը եւ նրբորեն անհատականացնում՝ երկու դեպքում էլ մնալով միանգամայն համոզիչ ու անկեղծ: Անգամ այն կտավները, որոնք թեմատիկ առումով համախումբ են, բազմաֆիգուր, սակայն այդ ֆիգուրներից ամեն մեկն ունի իր միանգամայն ինքնուրույն հնչեղությունը, իր ասելիքը. յուրաքանչյուրն իր ներսում ընդգծված անհատականության կրող է՝ ընկղմված սեփական հույզ ու ապրումի, սեփական մտորումների մեջ («Փողոցում», «Ընտանիք», «Ձվի վաճառք», «Այցելություն մորը», «Խնջույք անտառում»): Այս առումով, ինչպես նաեւ կոմպոզիցիոն ինքնատիպ լուծումով կարելի է առանձնացնել «Պարսկական ճաշարան» կտավը, որի դրվագներից ամեն մեկը մի աշխարհ է եւ այնքան ավարտուն, որ կարելի է այն որպես



մեկ պաստառի վրա հավաքված չորս առանձին գործ դիտել: Սա Կարալյան արվեստագետի կերպավորման սքանչելի հնարքներից մեկն է եւ ամենեւին էլ ոչ պատահական, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Նկարչին ճանաչած յուրաքանչյուր անձ կարող է փաստել, որ իր ստեղծած կերպարներից ամեն մեկում ապրում էր հենց ինքը՝ նկա-



րիչը՝ ներամփոփ, ասես մեկուսի, լռակյաց ու խոհուն աչքերով, որոնց ճոթերին մշտապես զգացվում էր դատարկված «գավաթից» մնացած տաք խոնավությունը՝ այն հուշը, որի թելերը ձգվում էին իր կարոտյալ անցյալը տանող արահետները: Այդ հուշերի, այդ արահետների տիրակալները պարզ ու հասարակ մարդիկ են՝ իրենց հացն արդար քրտինքով վաստակող, իրենց երազի ճոթքերն առօրյա հոգս ու ապրումի մեջ թաթախած: Նրանցից մեկը՝ պարզ մի շինական, ավանակին նստած քաղաք է գնում՝ իր ձեռքով ստեղծած բարիքը վաճառելու, մի գողտրիկ իջեւանատան մոտ ահա դադար են առնում ճամփա ելած կանայք ու տղամարդիկ, փոքրիկ մանչուկն ու նրանց «տրանսպորտը»՝ ձին, մեկ այլ կտավից մեզ են երեւում գյուղական հացթուխները, մյուսից՝ սուջուխ պատրաստողները, երրորդից՝ ճամփեզրին աքլորներ ու պտուղներ վաճառող կանայք: Ալյվածի անդավաճան հմայքով են ստեղծվել նրա ալրաղացները, ածխավաճառները, քարտաշը, ջրկիրները, թութ թափ տվողներն ու «քեֆչի» կինտոները՝ պարելիս («Դեպի քաղաք», «Հաց են թխում», «Հանգիստ ճանապարհին», «Սուջուխ են կախում», «Գյուղական շուկա», «Ջաղացի մոտ», «Քարտաշը», «Շալախո» եւ այլն): Իր այս «հուշերում» Կարալյանը չի փորձում կեղծել, չի փորձում անցյալի իր «ժեքիաթին» ո՛չ հակադրել առօրեական գորշությունը եւ ո՛չ էլ իր աշխարհը սքողել կեղծ պաճուճանքներով: Նրա ստեղծած ու մեզ ժառանգած գիծը, գույնը, երանգը չեն ճչում, չեն աղմկում, այլ հանդարտ ու մեղմաշրշյուն սահում են կտավի մակերեսով եւ դիտողին ստիպում ընկղմվել բանաստեղծականի՝ ներքին գունավորումներով հագեցված հարուստ աշխարհը: Նրա գործերից ոչ մեկում չկա պահանջարկային մոտեցում: Նա եղել ու մնում է ազնիվ՝ ինքն իր եւ իր հուշերի հանդեպ, մնացել որպես անկեղծ ներշնչանքների կրող:

Նկարչի գործերի գեղարվեստական ու գաղափարական ուժն ու գրավչությունը թախծով պարուրված հուզականությունն է, խոհը, զգացածի ու ապրածի չմիջնորդավորված, անկեղծ ու անաչառ տպավորությունները: Այս իմաստով առավել հիշեն են նկարչի՝ կանանց կերպարները: Դրանց ասելիքի ուղղվածությունը մայրության, գեղեցկության, մարդկության գոյության ճշմարիտ իմաստի հավերժականությունն է, կնոջով հրճվելու, նրա մշտագո ընթացքին իրենը բերելու անսքող տենչը («Հանդերձարանում», «Կանանց բաղնիք», «Սպասում», «Մոր վիշտը», «Կնոջ դիմանկար» եւ այլն):

Դիմանկարի փորձի նման սուղ հնարավորության շրջանակում դժվար է պատշաճորեն ներկայացնել Կարալյան նկարչի ստեղծագործական որոնումների ու ազդեցությունների շրջանակները, ձեռագրի ու աշխարհայացքի ձեւավորման խթանիչ գործոններն ու ընթացքը: Ասենք միայն, որ ինչպիսին էլ լինեն դրանք, արդյունքում նրա կտավները, որոնք այլեւս դասականի արժեք ունեն եւ իրենց անփոխարինելի տեղը մեր կերպարվեստում, զերծ են ժամանակին տուրք տալու միտումից: Դրանք առավելապես խոսում են այն մասին, որ արարման բանալին մարդու մանկության լուսավոր ու անեղծ տպավորություններով լեցուն փոքրիկ ու մեծ աշխարհի խնամված ու փայփայված ծալքերում է:

*Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ*

# ՕԳՏԱԿԱՐ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 6*

Թվում է, թե ուղեցույցի հեղինակները «միասնական պատմություն» ստեղծելու միտում չեն ունեցել, այսուհանդերձ առանձին դրվագները ներքին տրամաբանությամբ ստեղծում են «մեծ պատմությունը», որի վկաները հայոց ճարտարապետության կառույցներն են:

Սբ Հրեշտակապետաց եկեղեցին հիշատակվում է 6-7 դարերից: Պատերը 3,5 մ հաստություն ունեն: Հրեաները Հիսուսին ձերբակալելուց հետո այստեղ արգելափակեցին: Այստեղ է եւ հանրահայտ ձիթենին՝ չարչարանքների ճանապարհի միակ կենդանի վկան: Ս. Փրկիչ եկեղեցում պահվում է չարչարանաց սյան մի մասը, ինչպես եւ Քրիստոսի գերեզմանի մուտքը փակող ժայռի կտորը: Այստեղ են հանգչում հայոց պատրիարքներ Գրիգոր Պարոնտերը, Գրիգոր Շղթայակիրը:

Բազմաթիվ սրբավայրերից առանձնացնենք եւ Սբ Հարության տաճարը, որ գտնվում է Հին Երուսաղեմի կենտրոնում: Բավական է ասել, որ քրիստոնեական կարեւորագույն սրբավայրերը՝ Քրիստոսի խաչելության Գողգոթան, պատանապատման վայրը եւ ի վերջո գերեզմանը գտնվում են այստեղ: Այս տաճարի սեփականատերերն են հայերը, հույները, լատինները: Մատուռի մուտքի մոտ մշտապես կանգնած են հայ, հույն եւ լատին միաբանները, որովհետեւ այստեղ արարողություններ անելու իրավունք ունեն միայն այս երեքը:

1960-ականներին պեղումների հետեւանքով հայտնաբերվեց Սբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցին: Մեր գործուն ներկայությունը քրիստոնեության արշալույսին փաստում են ինչպես արդեն հայտնի սրբատեղիները, այնպես էլ հայտնաբերվող նորանոր սրբատեղիները: Հեղինակների աչքից չեն վրիպել եւ ոչ մի կարեւոր սրբատեղի եւ մասունք:

Ուղեցույցը ճանաչողական մեծ նշանակություն ունի, թեեւ չի կարելի անտեսել եւ երեւույթի զուտ մշակութային արժեքը: Տեւական ժամանակի մեջ հոգեւոր գանձերի արարումն ու ստեղծումը՝ նախնյաց ջանքերով, այսօր հարկադրում է մեզ պատասխանատու լինել ինչպես անցյալի, այնպես էլ ապագայի առջեւ:

*Վաչագան ԳՐԻԳՈՐՅԱՆ*

*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

## (Ձեւավորումից մինչեւ մեր օրերը)




Ավստրալիայում հայերն սկսել են հաստատվել 1850-ական թթ.: Այդ ժամանակաշրջանում եվրոպական վաճառականները, մասնավորապես՝ անգլիացիները, դուրս էին մղել հայերին Հարավային եւ Հարավարեւելյան Ասիայում կատարվող առեւտրից, ինչի պատճառով էլ տեղի հայերը նոր հանգրվան էին փնտրում: Այդ հանգրվանը դարձավ Ավստրալիան, որը հրապուրում էր Հարավարեւելյան Ասիայի երկրներում ապրող հայերին՝ իր օգտակար հանածոների, մասնավորապես՝ ոսկու հանքերով:

Հայերի առաջին սակավաթիվ խմբերն Ավստրալիա էին մեկնում հիմնականում Ինդոնեզիայից, Սինգապուրից, Հնդկաստանից, Հարավարեւելյան Ասիայի այլ երկրներից, Կոստանդնուպոլսից եւ Արեւմտյան Հայաստանից: Ավստրալիայում հաստատված հայերի վիճակը շատ ծանր էր: Նրանք աշխատում էին հանքավայրերում՝ ենթարկվելով անսանձ շահագործման: Սա է պատճառը, որ շուրջ կես հարյուրամյակի ընթացքում ավստրալահայերի թվաքանակը գրեթե անփոփոխ էր մնում:

19-րդ դ. վերջին Ավստրալիայում ապրում էր մի քանի տասնյակ հայ, եւ սա այն դեպքում, երբ 19-րդ դ. երկրորդ կեսին հարյուրավոր հայեր էին մեկնել Ավստրալիա: 19-րդ դ. վերջին ավստրալահայերը կենտրոնացած էին Մելբուռն, Բրենգթոն, Սիդնեյ, Բրիսբեն, Բրոքեն Հիլլ քաղաքներում:

20-րդ դարի սկիզբն ավստրալահայերի կյանքում նշանավորվեց նոր տեղաշարժերով: Անհաջողություն կրելով հանքավայրերում՝ հայերն աստիճանաբար սկսեցին կենտրոնանալ խոշոր քաղաքներում, առավելապես՝ Մելբուռնում եւ Ադելաիդայում, որտեղ նրանք զբաղվում էին հիմնականում մանր առեւտրով եւ արհեստներով, իսկ երբեմն էլ աշխատանք էին գտնում նավերի վրա:

Հայոց ցեղասպանությունից մազապուրծ եղած փոքրաթիվ հայեր, ավստրալահայ բարերարների միջոցներով, 1918 թ. հաստատվում են Ավստրալիայի Սիդնեյ եւ Մելբուռն քաղաքներում, ինչպես նաեւ Ավստրալիայի այլ մասերում: Նրանք այստեղ զբաղվում են արհեստներով, մանր առեւտրով, ընդգրկվում արդյունաբերության մեջ: Ավելի փոքր թիվ էին կազմում երկրագործությամբ զբաղվող հայերը: Աստիճանաբար ի հայտ են գալիս մեծահարուստ գործարարներ եւ պրոֆեսորներ: Սակայն հայկական համայնքը դեռեւս ձեւավորված չէր:

1920-ական թթ. սկզբներին Ավստրալիայում փոքրաքանակ հայեր են հաստատվել Ռուսաստանից եւ Հունաստանից: Սակայն այդ տարիներին Ավստրալիայում չէր խրախուսվում ամեն մի էթնիկ հանրության ներկայացուցիչների ներգաղթը, ինչի պատճառով էլ հայերի մուտքն այդ երկիր խիստ բարդանում էր:

Վիճակը փոխվեց Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ Ավստրալիայում վերանայվեց ներգաղթի քաղաքականությունը՝ կապված տնտեսության զարգացման քաղաքականության հետ: Այստեղ սկսեցին հաստատվել հայեր Չինաստանից, Սինգապուրից, Ինդոնեզիայից, Հարավարեւելյան Ասիայի այլ երկրներից: Նրանք զգալիորեն տարբերվում էին մինչ այդ Ավստրալիայում հաստատված հայերից, քանի որ տիրապետում էին մի քանի լեզուների եւ ունեին մասնագիտական բարձր որակավորում:

1950-ական թթ. սկզբներին Ավստրալիայում են հաստատվում հայեր Սիրիայից, Լիբանանից, Կիպրոսից, Եգիպտոսից, Հնդկաստանից, Ինդոնեզիայից, Չինաստանից եւ այլ երկրներից, եւ հայերի թվաքանակը, տարբեր տվյալներով, կազմում էր 500-1500 մարդ, որոնք կենտրոնացած էին Մելբուռն, Սիդնեյ եւ Ադելաիդա քաղաքներում:

1950-ական թթ. վերջերին սկսում է ձեւավորվել ավստրալահայ համայնքը: Նախ եւ առաջ կազմավորվում է Սիդնեյի, իսկ մի քանի տարի անց՝ Մելբուռնի հայ համայնքը: 1957 թ. Սիդնեյում օծվել է Ս. Հարություն հայկական եկեղեցին, իսկ 1962 թ. Մելբուռնում՝ Ս. Աստվածածին եկեղեցին:

1960 թ. Սիդնեյում հիմնվում է ավստրալահայոց առաջին դպրոցը:

1960-ական թթ. սկզբներին Ավստրալիայում արդեն գոյություն ուներ կազմավորված հայ համայնք (առնվազն՝ 1000 մարդ): Սկսում են գործել հայկական առաջին հասարակական-քաղաքական կազմակերպությունները՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Սիդնեյի մասնաճյուղը (1962 թ.), ՀՅԴ կազմակերպական կառույցները Սիդնեյում եւ Մելբուռնում (1964 թ.), Համազգային մշակութային միության Ավստրալիայի մասնաճյուղը (1964 թ.), Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) Ավստրալիայի մասնաճյուղը (1965 թ.), Հայ օգնության միության (ՀՕՄ) Ավստրալիայի մասնաճյուղը (1965 թ.): Սկսում է գործել հայ պարբերական մամուլը:

1960-ական թթ. առաջին կեսին Ավստրալիայում են հաստատվում հայեր Եգիպտոսից, Իրանից, Կիպրոսից, Սիրիայից, Լիբանանից եւ այլ երկրներից, եւ հայերի թվաքանակը (ըստ մարդահամարի տվյալների) 1966 թ. հասնում է 6000-ի (Ավստրալիայի բնակչության ավելի քան 0,05 %-ը), որոնք կենտրոնացած էին Մելբուռն (1500 հայ, այսինքն՝ Մելբուռնի բնակչության 0,07 %-ը) եւ Սիդնեյ (ավ. 4 000 հայ, այսինքն՝ Սիդնեյի բնակչության 0,16 %-ը) քաղաքներում:

1960-ական թթ. հայ համայնքի ամբողջացման բարձրակետը դարձավ Հայոց Եկեղեցու թեմի ստեղծումը: 1968 թ. Վազգեն Ա-ի կոնդակով կազմավորվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի թեմը, որի առաջնորդանիստն է Սիդնեյի Ս. Աստվածածին եկեղեցին:

Հաջորդ տասը տարիների ընթացքում հայերի թիվն աճում է՝ հասնելով 15000-ի (Ավստրալիայի բնակչության 0,12 %-ը): 1960-1980-ական թթ. Ավստրալիայում են հաստատվում հայեր Սիրիայից, Լիբանանից, Կիպրոսից, Իրաքից, Սուդանից, Եթովպիայից, Իրանից, Հունաստանից, Թուրքիայից, Ֆրանսիայից, Բուլղարիայից, Ռումինիայից եւ այլ երկրներից: Շարունակում են ստեղծվել հայկական հասարակական-քաղաքական կազմակերպություններ (Հայ դատի հանձնախմբի, ՌԱԿ-ի եւ ՍԴՀԿ-ի մասնաճյուղերը Ավստրալիայում, Ավստրալահայ միացյալ ընկերակցությունը, Ավստրալահայերի պատմական միությունը, «Նոր սերունդ» եւ «Թեքեյան» մշակութային միությունների Սիդնեյի մասնաճյուղերը եւ այլն):

1980-1987 թթ. ընթացքում ավստրալահայերի թվաքանակը հասնում է 25000-ի (Ավստրալիայի բնակչության 0,16 %-ը):

1988-2003 թթ. Ավստրալիայի հայ համայնքի կյանքում լուրջ փոփոխություններ են տեղի ունենում: Շարունակվում է հայերի ներգաղթը Ավստրալիա մի կողմից Մերձավոր Արեւելքի երկրներից, իսկ մյուս կողմից տեղի է ունենում մեծաթիվ հայերի ներհոսք ՀՀ-ից եւ ԱՊՀ-ի երկրներից: Արդյունքում՝ արդեն 1990-ական թթ. սկզբներին հայերի թվաքանակն Ավստրալիայում հատում է 30000-ի սահմանը (Ավստրալիայի բնակչության 0,18 %-ը):

2003 թ. Ավստրալիայում բնակվում էր մոտ 40000 հայ: Նրանք կենտրոնացած էին հիմնականում Սիդնեյ ( 25000 հայ, այսինքն՝ Սիդնեյի բնակչության 0,7 %-ը) եւ Մելբուռն (10000 հայ, այսինքն՝ Մելբուռնի բնակչության 0,32 %-ը) քաղաքներում: Ավելի քան 1000 հայեր էլ տեղաբաշխված էին Պերտ (500), Բրիզբեն (300), Ադելաիդա (200), Հոբարտ (50), Կանբեռա (40) քաղաքներում՝ միասին վերցրած:

2003-2010 թթ. շարունակվել է հայերի ներգաղթն Ավստրալիա Մերձավոր Արեւելքի երկրներից, ՀՀ-ից եւ այլ երկրներից: Ներկայումս (2010 թ.) Ավստրալիայում ապրում է շուրջ 45000 հայ (Ավստրալիայի բնակչության 0,23 %-ը): Նրանք կենտրոնացած են Սիդնեյում (շուրջ 30000 հայ) եւ Մելբուռնում (շուրջ 12000), իսկ Ավստրալիայի մյուս քաղաքներում հայերի թիվը 2003 թ. համեմատ գրեթե անփոփոխ է մնացել: Նրանք հիմնականում հայախոս են, կան փոքր թվով անգլիախոսներ:

Ավստրալահայերի 90 %-ից ավելին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետեւորդներ են, մոտ 7 %-ը՝ կաթոլիկներ (Մելբուռնում եւ Սիդնեյում կան հայ կաթոլիկական եկեղեցիներ): Ավստրալիայում ապրում են նաեւ փոքր թվով ավետարանական հայեր, որոնք իրենց եկեղեցին ունեն Սիդնեյում:

Ավստրալահայերի 1/3 մասը բանվոր է: Մեծ թիվ են կազմում արհեստավորները (հատկապես՝ ոսկերիչները), առեւտրականները, պետական ծառայողները, խոշոր ու միջին արդյունաբերողները, իրավաբանները, բժիշկները:

Այժմ Ավստրալիայում գործում է 3 ամենօրյա եւ 6 մեկօրյա վարժարան, ինչպես եւ կաթոլիկ եկեղեցիներին կից 2 մեկօրյա վարժարան: Հրատարակվում է հայկական 6 պարբերական (Սիդնեյում՝ «Արմենիա», «Գարուն», «Զանգ», «Լույս», «Միություն», Մելբուռնում՝ «Հույս»): Մելբուռնում եւ Սիդնեյում գործում են հայկական ռադիոժամեր:

Ավստրալահայ համայնքի ազգային, հոգեւոր եւ կրթական գործը ղեկավարում է թեմի առաջնորդի նախագահությամբ գործող թեմական խորհուրդը՝ բաղկացած 7 հոգուց, որոնցից 4-ը Սիդնեյից են, իսկ 3-ը՝ Մելբուռնից:

Եկեղեցիներին կից գործում են մեկօրյա վարժարաններ, թատերախմբեր, մարզական խմբեր, երիտասարդական միություններ եւ ներհամայնքային այլ հաստատություններ:

Այսպիսով, Ավստրալիայի հայ համայնքն ամենաակտիվ հասարակական կյանքով ապրող հայկական համայնքներից է Սփյուռքում եւ կարող է կազմակերպված գոյակցության հոյակապ օրինակ ծառայել այլ երկրների հայկական համայնքների համար:

*Միքայել ՄԱԼԽԱՍՅԱՆ*

# ՏՈՆ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

*Սկիզբը՝ էջ 5*

Նրանց թարգմանած առաջին նախադասությունն էր. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Առակաց Ա 1): Ճիշտ հասկանալով այս խրատի իմաստը՝ հայ ժողովուրդը հայերեն այբուբենը դարձրեց իր հիմնական զենքը օտար նվաճողների դեմ՝ իր պատմության ողջ ընթացքում:

Մեր սբ հայրերը, փնտրելով Թարգմանչած լույսը, դեգերում էին օտար երկրներում, հիմնում լուսավորության կենտրոններ, որպեսզի իրենց հայրենիքում, իրենց ժողովրդի հոգիներում եւս վառվեին լուսո ջահեր՝ անմար ու մշտնջենական:

Լուսահոգի Վազգեն Ա Հայրապետը (1955-1994), պատգամ հղելով հայ ժողովրդին, ասում է. «Մենք հայ ենք հայերեն լեզվով... հետեւաբար, ամեն ճիգ ի գործ դրեք պահպանելու հայոց լեզուն ձեր եկեղեցիներից եւ ձեր ընտանեկան հարկից ներս»:

Հիրավի, ո՞վ ենք մենք առանց մեր լեզվի, մեր Եկեղեցու եւ մեր մշակույթի: Մենք բոլորս գիտակցում ենք, որ մեր ժողովրդին միմյանց կապողը միայն մեր կրոնն ու լեզուն են: Աշխարհով մեկ սփռված հայ ժողովուրդը՝ իր եղբայրների եւ քույրերի հետ, կապված է սեփական Եկեղեցիով եւ լեզվով. մի՞թե այս երկու ամենաթանկ արժեքներից առավել կա ինչ-որ բան, որ կարող է կապել հայրենակիցներին միմյանց: Իհակե՝ ո՛չ:

Նույն հավատով եւ նվիրումով են գործել ու աղոթել նարեկացիներն ու շնորհալիները, որոտնեցիներն ու տաթեւացիները, եւ առաջին թարգմանիչների հենց այս ճշմարիտ հետեւորդներն են, որ եկան վերստին արժեւորելու հայոց պատմության հետագա էջերը:

Ահա սրանք՝ այս սրբանուն այրերն են այն ճշմարիտ աշակերտները, որոնք թեեւ աշխարհ էին եկել դարեր հետո, բայց անշեղորեն հետեւել են իրենց հայրերին, իրենց ուսուցիչներին՝ իբրեւ հայ քրիստոնյա: Այսպիսին է ճշմարիտ աշակերտի վարձահատույցը՝ պահել, պահպանել ու լավագույնս հավելել իրենց փոխանցված անուրանալի ժառանգությունը: Նման անձերն են կենդանի ծառի արմատն ու բունը, այն ծառի, որ պիտի



ծաղկի եւ պտուղներ տա ժամանակի մեջ:

Մեսրոպյան այբուբենը, առաջնորդելով հայ ժողովրդին, ըմբռնելի դարձրեց Քրիստոսի Ավետարանի Լույսը: Հենց այս սրբարար խորհրդով է, որ Թարգմանչաց տոնին աստվածահաստատ մեր տաճարներում աղոթք ենք բարձրացնում առ Աստված՝ նրանց լույս հոգիների հանգստության ու անմահության համար:

Թող Տիրոջ բարեխնամ Աջի հովանու տակ հայ ժողովուրդը ծնի բազում մաշտոցներ եւ սահակներ. Ամեն:

*Սենիկ սրկ. ՄԽԻԹԱՐՅԱՆ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր.
18.10. 2010 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**